Ազգ

AZG
armenian newspaper

Յունիս 18
1992
Հինգշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 48 (140)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 SULASU

Իրանը զսպող ուժեր է ստեղծում

Անցյալ ամիս Իրանի հյուսիս-արեւելքում գտնվող Մեշհեդ քաղաքում տեղի ունեցած ըմբոստ շարժումները զսպելու նպատակով Թեհրանի կառավարությունն ստեղծեց հատուկ ջոկատներ, որոնք ոստիկանության հետ միասին զսպելու են նման շարժումները: Վերջերս երկրի տարբեր շրջաններում ըմբոստ արարքներ հաճախ են պատահում, ազգաբնակչության դժգոհությունը հրավիրելով ոստիկանության անկարողության նկատմամբ:

ՄԱԿ-ը զինաթափում է կամքոջացիներին

Վերջերս հաստատված զինադադարի պայմանների համաձայն, ՄԱԿի կապույտ սաղավարտակիրները երեկ զինաթափեցին 4500 կամքոջացի զինվորների: Սակայն կարմիր կխմբերները շարունակում են ընդդիմանալ զինադադարի մի շարք պայմաններին: ■

ՀՌԱԿ հանրապետական վարչության հայտարարությունը

Խոր մտահոգություն արտահայտելով Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից ծավալվող պատերազմական նախահարձակ գործողությունների եւ դրանց հետեւանքով ստեղծված վտանգավոր կացության առթիվ, ՀՌԱԿ հանրապետական վարչությունն այն գնահատում է նաեւ որպես ազգային անվտանգությունը ապահովող կառույցների անկազմակերպվածության, պատշաճության համակարգի բարձրագույն օղակներում մասնագիտական կարողությունների անտեսման, ինչպես նաեւ ճակատագրական պահին միջկուսակցական անհարկի մրցակցության հետեւանք:

Մենք հանցավոր քաղաքականություն ենք համարում իշխանության գալու համար Արցախի խնդրի եւս մի անգամ շահարկումը նեղ կուսակցական նպատակներով:

Տարածաշրջանում արտաքին ուժերի շահերի բախման պայմաններում Հայաստանը օրեցօր վերածվում է դավադրությունների ու մութ ծրագրերի հանգուցակետի, որի հաղթահարումը պահանջում է հայ քաղաքական ուժերի եւ իշխանության բոլոր օղակների սթափությունն ու սերտ համագործակցությունը, հայ ժողովրդի ներգոր բոլոր կարողությունների համակարգված օգտագործումը: ■

Դեմիրելը Տեր-Պետրոսյանին. «Մի թույլ տվեք, որ ամերիկահայերը կառավարեն ձեզ»

Սատմբուլից ՌԱԿ Բոստոնի պատգամաւորներ *«Արմենիքն Միրոր Սփեմբեյբոր»* թերթի թղթակիցը հայտնում է, որ օրերս թուրքական մամուլը լեցուն է Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ վերջերս Ռիո դե Ժանեյրոյում կայացած առաջին հանդիպման մասին մեկնաբանություններով: Թուրքական թերթերը, իրենց սովորության համաձայն, միակողմանի ներկայացնելով այդ հանդիպումը եւ առավելությունը միշտ պահելով իրենց առաջնորդի կողմը, Հայաստանի նախագահին ներկայացնում են դաստաղարտյալի աթոռին նստածի վիճակում:

Կիրակի, հունիսի 14-ին կայացած այդ հանդիպման մասին, որը տեւել է 45 րոպե եւ որին ներկա են գտնվել երկու երկրների արտգործնախարարները, թուրքական թերթերը գրում են, որ հանդիպման սկզբում Դեմիրելը հայտնել է, թե մի կողմ թողնելով բոլոր պատասխանատվությունները իր միտքը արտահայտելու է առանց դիվանագիտական ձեւականությունների:

«Դուք չեք կարող ձեր նպատակին հասնել պատերազմով կամ կոխվներով, ասել է նա իր խոսակցին: 1000 տարի հետո ձեզ առիթ է ներկայացել անկախ Հայաստան ստեղծելու: Բայց դուք չեք կարող այդ պետությունը հիմնել վրեժխնդրության, ատելության եւ պատերազմի վրա: Բիրտ ուժի վրա հիմնված պետությունները երկար չեն կարող դիմանալ»:

Այնուհետեւ նա սպառնացել է. *«Դուք շրջապատված եք Ադրբեջանով եւ Թուրքիայով: Մինչեւ նրանց հետ բարեկամական հարաբերություններ չհաստատեք, հայտնվելու եք լուրջ խնդիրների եւ դժվարությունների առաջ»:*

Անդրադառնալով Լ. Տեր-Պետրոսյանի այն առարկությանը, թե Արցախի հարցում Ադրբեջանն է նախահարձակը եւ ոչ թե Հայաստանը եւ թե Երեւանը հետամուտ է խնդրի խաղաղ կարգավորումը գտնելու Դեմիրելը, ըստ թուրքական թերթերի, պատասխանել է.

«Եթե խաղաղություն եք ուզում, առա՛ջ թողեք եւ հեռացեք Շուշիից ու Լաչինից: Ամենից դուք ոչեր է իմանաք, որ մենք խոր մտահոգությամբ ենք հետեւում Նախիջեւանի դեպքերին: Մենք ձեզ խորհուրդ ենք տալիս հարցերը լուծել Նախիջեւանի եւ Ադրբեջանի հետ բանակցությունների միջոցով»:

Վերջում Դեմիրելը, համաձայն թուրք թերթերի, եզրակացրել է. *«Հանանորեն փորձեք կառավարել ձեր երկիրը, եւ աշխարհի մյուս երկրներին մի հրավիրեք միջամտելու ձեր ներքին գործերին: Եւ մի թույլ տվեք, որ ամերիկահայերը կառավարեն ձեզ եւ ձեր գործերը»:*

Մեր կողմից կարող ենք ենթադրել, որ Արցախի ու Նախիջեւանի հարցում թուրքական մամուլի եւ ընդդիմության ենթադրությունների թիրախ դարձած Դեմիրելի վարկը մամուլում լույս տեսած այս հրապարակումներից կարող է մի քիչ բարձրանալ: ■

Արգենտինան ՄԱԿ-ում պաշտպանելու է Հայաստանին

Արգենտինական «Լա Պրենսա» ամենածավալուն օրաթերթն իր հունիսի 12-ի համարում գրում է, որ Բուենոս Այրեսում իր պաշտոնական այցի ժամանակ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդիպում է ունեցել նաեւ խորհրդարանի նախագահ Էդուարդո Մենեմի (Արգենտինայի նախագահի եղբայրը) հետ, որ հայտարարել է, թե իր երկիրը պատրաստ է ՄԱԿ-ում համագործակցել Հայաստանի հետ, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման գործում. «Ինչպես աշխարհի տարբեր մասերում ՄԱԿ-ի նման ջանքերի պարագայում, Արգենտինան պատրաստ է իր մարդկանցով եւ տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով օգնել, որպեսզի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն առի՛թ խաղաղության մեջ»: Իր հերթին, պրն. Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ «ինչպես Հարավսլավիայում, միջազգային կազմակերպությունները շատ դանդաղ են գործում Լեռնային Ղարաբաղի հարցում: Ես վստահ եմ, որ Արգենտինայի կառավարության օգնությամբ մենք կարողանանք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջամտությունը: Եթե առաջի կա 2 ամիսների ընթացքում ՄԱԿ-ը խաղաղապահ զորք չուղարկի, իրավիճակը անտանելի կդառնա»: ■

Հայտարարություն

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը խստորեն դատապարտում է Հայաստանի հեռուստառադիոտեսվարչության ղեկավարության վերջին որոշումները, որոնք ուղղված են ռամկավարական պետության կայացման դեմ եւ նպատակ ունեն հեռուստատեսությունը վերածել պաշտոնական քաղաքականության գործ եւ միակողմանի լուսաբանման միջոցի:

Հեռուստառադիովարչության ղեկավարության գործունեությունը ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը դիտում է որպես Հայաստանում ռամկավարության եւ բազմակուսակցության զարգացման դեմ ուղղված սպառնալիք, որը վերաբերում է բոլոր կուսակցություններին ու հասարակական-քաղաքական կազմակերպություններին:

Վերջին շրջանում փակվել են մի շարք ծրագրեր, իսկ երկու օր առաջ հեռուստառադիովարչության նախագահի հրամանով պաշտոնից ազատվել է հանրապետության լավագույն հեռուստալրագրողներից ՀՌԱԿ-ի անդամ Ռոբերտ Մավիսակալյանը եւ եթեր դուրս գալու հնարավորությունից զրկվել մարզական մեկնաբան, նույնպես ՀՌԱԿ-ի անդամ Սուրեն Բաղդասարյանը: Վերոհիշյալ արարքները մենք գնահատում ենք որպես քաղաքական հայացքների համար հետապնդման դրսեւորում, ինչպես նաեւ՝ մարդկանց պրոտեստում, ինչպես աշխատանքի խափանում:

ՀՌԱԿ հանրապետական վարչությունը պահանջում է.

1. ՀՀ ԳԽում քննելով հեռուստառադիովարչության հարցը՝ ապահովել վերջինիս գործունեության որակական նոր կարգավիճակ, որը բացառի գրաքննությունը, ապահովի բազմակարծությունը եւ հնարավորություն ընձեռի բոլոր քաղաքական հասարակական կազմակերպություններին՝ արտահայտելու եւ անվճար ներկայացնելու իրենց մոտեցումները:

2. Ապահովել հեռուստառադիովարչության ղեկավարության ռամկավարական ընտրությունները աշխատակազմի կողմից եւ նրա ներքին ինքնավարությունը:

3. Մինչ այդ՝ անհապաղ վերականգնել Ռ. Մավիսակալյանին իր պաշտոնում եւ վերադարձնել Ս. Բաղդասարյանին եթեր դուրս գալու իրավունքը:

4. Վերականգնել ժողովրդականություն վայելող ծրագրերը:

ՀՌԱԿ Հանրապետական վարչություն

Շահումյանցիների դառը բողոքները

Գեւորգյան խորհրդի պատգամավորը սպառնում է փաստեր բացահայտել

«Մենք գլխատվածք չենք ուզում դառնալ: Իսկ եթե հարցն այդպես դրվի, մենք կարող ենք մեր համայնքով հեռանալ Հայաստանից եւ ապրել ցանկացած ուրիշ երկրում», ասաց երեկ օրվա երկրորդ կեսին Նախարարների խորհրդի շենքի դիմաց հավաքված հարյուրավոր բորբոքված շահումյանցիներից մեկը: Բողոքողների մեջ տարեայնորեն առաջացավ նաեւ նոր պահանջ կանչել Շահումյանի շրջանի ղեկավարներին ու հարցնել, թե ո՞վ է Շահումյանի հանձնման հրամանը տվել:

Այդ ժամանակ մարդկանց մեջ հայտնվեց Գեւորգյան խորհրդի պատգամավոր, ՀՀԴ անդամ Ռաֆիկ Ղազինյանը, որը հենց նոր էր վերադարձել Արցախից եւ որին շահումյանցիներն անմիջապես շրջապատեցին խիտ օղակով: Նա շատ կցկտուր, մի քանի խոսքով պատմեց Շահումյանի իրադարձությունների մասին եւ ասաց միայն, որ տեղի է ունեցել դավաճանություն եւ Շահումյանի շրջանը ոչ թե նվաճվել է, այլ ծախվել: «Ես բազմաթիվ փաստեր ունեմ, որ կներկայացնեմ միայն Գեւորգյան խորհրդին», ասաց նա:

Այն լուրերը, թե Շահումյանի շրջանի գյուղերում դիմադրություն չի եղել, սուտ են, շարունակեց Ղազինյանը: Իրականում տղաները կռվել են աներեւակայելի քաջությամբ եւ միայն Բուզլուխում 7 ժամ պահել բարձունքները ռուսական բանակի տանկերի, զրահամեքենաների, հետեւակի մարտական մեքենաների ու կարմիր բերետավոր հետեւակի դեմ կռվելով առանց տեխնիկայի: Գյուղի պաշտպաններին հաջողվել է դիմադրել Վազգեն Սարգսյանի հետ, որը խոստացել է 30 միավոր զրահատեխնիկա ուղարկել: Բայց ոչ մի օգնություն այդպես էլ չի ստացվել: Առանց լուրջ դիմադրության է հանձնվել միայն Գյուլիսանը, որովհետեւ այդտեղ դժվար էր պաշտպանություն կազմակերպել: Գյուլիսանում էին հավաքվել շրջանի 14 հազար բնակիչները, որոնցից 4 հազարը երեխաներ: Այդ մարդիկ ոտքով, անտառներով, ջոկատների ուղեկցությամբ մի կերպ հասել են Թալիշ: Վերջին 4 հազար հոգին Մռավ սարի լանջերով գիշերը, մի լապտերի լույսով ճանապարհին քաջատեղյակ որսորդների ուղեկցությամբ հասել են Երիցմանկանց վանքը, դաստաղարվել այնտեղ ու մինչեւ հիմա էլ այնտեղ են: Շահումյանցիներին հաջողվել է նահանջելիս իրենց հետ տանել նաեւ ամբողջ մարտական տեխնիկան՝ մեկ «Գրադ» կայանք, երկու հետեւակի մարտական մեքենա, տանկ եւ հարիւր: Եւ միայն դրա շնորհիվ է դիմադրել Թալիշը: Բոլոր ջոկատները կռվել են հերոսաբար եւ մինչեւ հիմա էլ կռվում են: Ոչ մի ջոկատ հետ չի նկել, ոչնչում էր Ղազինյանը:

ՍՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ռազմական գործողությունները Հայաստանի դեմ կշարունակվեն

Երեկ կայացած մամուլի ասուլիսում Ադրբեջանի փոխվարչապետ, Մոսկվայում հանրապետության լիազոր ներկայացուցիչ Հիմմեթ Հաջիզադեն հայտարարեց, որ Ադրբեջանի նոր ղեկավարությունը հանդես է գալիս խաղաղ ճանապարհով Հայաստանի հետ կոնֆլիկտի լուծման օգտին, սակայն *«ռազմական գործողությունները կշարունակվեն, մինչեւ որ չազատագրվեն ադրբեջանական բնակավայրերը»:*

Խոսելով առաջիկա Մինսկի հանդիպման մասին՝ Հաջիզադեն նշեց, որ ադրբեջանական պատվիրակությունը կառաջնորդվի սահմանների անխախտելիության սկզբունքով: Փոխվարչապետը կարծիք հայտնեց, որ խորհրդակցությունը հաջողությամբ կավարտվի, եթե մինչ այդ ազատագրվեն Շուշին եւ Լաչինը:

«Մենք պատրաստ ենք ազգային փոքրամասնություններին, այդ թվում եւ հայերին, տրամադրել բոլոր իրավունքները եւ երաշխիքները ինքնությունը պահպանելու համար, ասաց Հաջիզադեն, *սակայն վարչական ինքնավարություն կտրամադրվի միայն այն դեպքում, եթե Հայաստանի ադրբեջանական բնակչությունը ստանա նմանատիպ հնարավորություն»:* Նա կողմ արտահայտվեց, որպեսզի հնարաւոր մարդասիրական միջանցքներ հաստատվեն Լեռնային Ղարաբաղ-Հայաստան, Նախիջեւան-Ադրբեջան: Փոխվարչապետը հերքեց ռուս վարձկանների մասին հաղորդագրությունը՝ նշելով, որ Ադրբեջանի տարբեր ազգություններ ներկայացուցիչներից կազմավորված գունդ է մասնակցում մարտական գործողություններին: ■

Տաւշում 3 զոհ, որոնց թվում մեկ երեխա

Տաւշ. Հունիսի 16-ին երեկոյան ժամը 6-ից մինչեւ 11-ը ուժգին կերպով հրետակոծվել են Տաւշի շրջանի սահմանամերձ Այգեպար, Սովսա, Ներքին Կարմիրաղբյուր գյուղերը եւ շրջկենտրոնը. Բերդում զոհվել են 3 հոգի՝ մայրն իր 7-ամյա դստեր հետ եւ մի երիտասարդ: Կան նաեւ վիրավորներ: Ավերվել է 7 տուն: Երեկ համեմատաբար հանգիստ էր, սահմանամերձ բոլոր բնակավայրերը գնդակոծվել են միայն փոքր տրամաչափի զինատեսակներից: Երեկվա ընթացքում զոհեր եւ վիրավորներ չեն եղել:

Իջեւան. Վերջին երկու օրերի ընթացքում հարաբերական հանգիստ է: Սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ լսվում են միայն առանձին կրակոցներ: Երեկ երեկոյան շրջան է մեկնել ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, որն այսօր բանակցություններ պետք է վարի ադրբեջանական կողմի հետ:

Վայք. Երեկ եւ նախորդ օրը Նախիջեւանի տարածից շարունակվում է շրջանի Խնձորուտ եւ Բարձրունք գյուղերի գնդակոծումն ու հրետակոծումը: Հակառակորդի կողմից գործի են դրվել զենքի բոլոր տեսակներ: Բարեբախտաբար վերջին երկու օրերի ընթացքում հայկական կողմից զոհեր եւ վիրավորներ չկան:

Կապան. Շարունակվում են շրջանի սահմանամերձ գյուղերի գնդակոծությունները: Երեկվա հրետակոծությունների ընթացքում Կապանի մատույցներում երկու արկ է ընկել: Զոհեր եւ վիրավորներ չկան:

Վերջին ժամ

Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարները երեկ նախատեսել են հանդիպել Ղազախում, հաղորդում են Բաքվից: Ոչ պաշտոնական տվյալներով, նախարարները ծրագրել են քննարկել զինվորների դիակների փոխանակման եւ հիմնական զենքի կիրառման հարցերը: Բաքուն մտադիր էր բարձրացնել Հայաստանի կողմից Լիբիայում զենք, մասնավորապես ՍԿԱՌ հրթիռներ, գնելու հարցը: Ադրբեջանի պաշտպանության նախարարության տվյալներով, Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբը առանձնացրել է այն օբյեկտները, որոնց դեմ հարված է հասցվելու: ■

digitised by A.R.A.R.@

Ջիջենք մեր երկիրը ըստ օտար նախագծի

Ընտրական նվեր Էշիբեյին

Եուբիի եւ Լաչինի գրավումից հետո ժամանակ կար մարսելու այդ հաղթանակները եւ անելու ավելին: Այդ «ավելին» ենթադրում էր նաեւ, ի թիվս այլ միջոցառումների, ռազմաճակատի գծի տեղափոխումը մեր տահմաններից որքան հնարավոր է հեռու: Այն ժամանակ դրա ամենաբարենպաստ պայմանները կային, եւ հարկավոր էր միմիայն մի փոքր իմաստունություն: Սակայն Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը միջազգային մակարդակով արված խոխոս հայտարարությունների հետեւում վերջին շաբաթներին Արցախի իճնաթաբեսղանության կազմալուծումն ու Շահումյանի հանձնումն էր պատրաստում, կոտրելով հին պարտությունների մղձավանջից հիշ թե շատ ոչկված ժողովրդի մեջքը: Նույն կերպ այսօր հանձնվում է Լաչինը, որից հետո պարզ է, թե ինչ կլինի: Այսինքն դա ծրագրվեց օտարների, պատրաստակամությամբ ընդունվեց Հայաստանի ղեկավարների կողմից: Հետո երեւի պարզաբանեն, թե այլ ելք չունեին:

Այս պահին էլ ոչինչ չի արվում, որ կանխվի նոր ողբերգությունը, ինչը վերջնականապես այս ժողովրդին կնեսի խեղճության ու անհուսության անդունդը: Ավելին, խորհրդարանի մեր «ընտրյալներից» ոմանք այնպիսի հայտարարություններ են ունենում, որ նմանատիպ ելույթի համար հարեւան հանրապետությունում նրանց կկախեին կամ կքարոզեին: Լրատվության պետական միջոցներով կինոնկարներ են ցուցադրվում, համերգներ եւ պետական բարձրաստիճան պաշտոնյաների իճնաթագոհ-սուտ ելույթներ... եւ ժողովուրդը բավարարված է: Նա կարծես ամեն ինչից հոգնել է, կարծես ամեն ինչ ավարտվել է:

Շահումյանում դիմադրություն չի եղել, որովհետեւ այն կազմալուծվել էր գիտակցաբար: Այնտեղից դուրս էին բերվել որոշ ջոկատներ, չգիտես ով ականաթրծել էր ճանապարհները: Հարձակվում էր ռուսական 4-րդ բանակի տանկային դիվիզիան, եւ վարձկանների մասին խոսելն այս պետքում ծիծաղելի է: Դարձյալ ռուս-թուրք-ամերիկյան բլոկի հերթական խաղը Հայաստանի Հանրապետության գլխին նոր փորձանք է պատրաստում, եւ այսօր դարձյալ չենք կարողանում ոչինչ հակադրել, չնայած, ըստ մեր համոզումների, անկախ պետություն ենք:

Երբ ղեկավարությունը կարծում է, թե այլ ելք չունենալով՝ միայն կատարելով եւ զիջելով որեւէ արդյունքի կիասնի սխալվում է չարաչար: Այս ձեւով մենք դաշնակիցներ էլ չենք ունենա, քանզի ո՞ւմ է պետք նախաձեռնությունից եւ իճնուրույնությունից զուրկ պետությունը: Երկու օր առաջ կարդում էինք Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած Սուլեյման Դեմիրելի զրույցից հատվածներ: Դեմիրելի տոնն այնպիսին էր, կարծես ծնողը նախատում էր հանցանք գործած երեխային:

Պետություն, ժողովուրդ, ղեկավարություն, կուսակցություններ... բաներ պետք չէ Ղարաբաղը, սրանց համար ժողովրդի ողբերգությունը շահարկման եւ հարաբերությունները պարզելու անսպառ նյութ է:

Իսկ սփյո՞ւռքը. Ամերիկայի հայապաշտպանական մեկ-երկու որոշումով, որոնք, որպես կանոն, չեն իրագործվում, ոչինչ չի փոխվում... Ավելի վատ՝ տեղի է ունենում սփյուռքի հետզհետե օտարում հայրենիքից:

Արեւմուտքը, Ռուսաստանը եւ Թուրքիան օրեցօր ուժեղացնում են ճնշումը Հռոմում եւ Մինսկում Լեռնային Ղարաբաղի հանրապետության մի այնպիսի որոշում պատրաստելու, որը նրան վերջնական կորցրում կբերի, ի վերջո, նաեւ Հայաստանին: Այս դեպքում ոչ մեկին չեն նայելու: Իսկ մենք շարունակենք ատարել, կռվել պետք չի, զիջենք, զիջենք, զիջենք հանուն օրվա հացի եւ յազի:

ՀԱՅԱՍՆ ՂԱՀՐԻՅԱՆ

ԱՐՑԱԽ. դառը օրեր պատմում են ականատեսները

Օրեցօր սաստկացող պատերազմի յուրաքանչյուր օրը նորանոր զոհեր ու վիրավորներ է բերում: Եւ, ցավոք, մեր ականջին արդեն այսօր սովորական են հնչում այն ամենօրյա լուրերը, թե Արցախի այսինչ գյուղը պաշտպանելիս զոհվել են այսքան ազատամարտիկներ, այսքանը վիրավորվել... Մինչդեռ, ամենօրյա պատերազմական այս համառոտ հաղորդագրությունների տակ նորանոր բեկված ճակատագրեր են, խորտակված կյանքեր, օջախի ու հայրենիքի կորուստ, բնաջնջում դեմ-հանդիման առանց փամփուշտի մնալու տագնապ, խրամատից հարյուր մետր այն կողմ, «Գրադից» ավերված տանը վերջին մոմի լույսի տակ կուչ եկած երեխաներ... Ու որքան էլ գեղեցիկ խոսքեր ասենք, դրանք ընդամենը գեղեցիկ խոսքեր են եւ ուրիշ ոչինչ: Մնում է միայն ցավը: Ցավը, որ վերից չէ, այլ քաղաքական խարդավանքների զոհ դարձած հայրենիքի կորուստից ու այդ խարդավանքների դեմ պայքարելու անզորությունից: Ցավը, որ սեղմում է մեր կոկորդը եւ դեռ այնքան է սեղմելու, մինչեւ... տրամադրդառնանք:



Ռոբերտ Հակոբջանյանը վիրավորվել է Ասկերանի երջանի Նախիջեւանիկ գյուղի մոտակա բարձունքում, հունիսի 13-ի առավոտյան: *«Նախիջեւանիկ եւ Փիրջամալ գյուղերի վրա հարձակումը սկսվեց հունիսի 12-ին: Սկզբում ռմբակոծեցին ռազմական իճնաթիռներով եւ ռդզաթիռներով, հետո զրահատեխնիկայով մտան գյուղերը: Ճիշտ է, գյուղերն ականապատված էին, բայց ադրբեջանցիները վնասազերծեցին ականները: Սկզբից, տեսնելով, որ առանց տեխնիկայի դիմադրելն անիմաստ է (գյուղի միակ զրահատեխնիկան անձնակազմի բացակայության պատճառով չի գործել), բնակիչներին գյուղերից դուրս բերեցինք եւ նահանջեցինք դեպի բարձունքները: Ես այդ ժամանակ Քյաթուկ գյուղում եմ եղել: Ասկերանից ռացիայով հայտնել են, որ Նախիջեւանիկի վրա հարձակում է սկսվել եւ պետք է գյուղի պաշտպաններին հաղորդել, որ նրանք պաշտպանեն բարձունքները: Ես գնացի այնտեղ: Արդեն Բալլուջա գյուղից 35 հոգի օգնության էին եկել եւ գտնվում էին բարձունքներում: Ամբողջ գիշեր մնացինք այդտեղ եւ ամսի 13-ի առավոտյան կողմ փորձ արեցինք ազատագրել Նախիջեւանիկը: Չստացվեց: Նորից վերադարձա Քյաթուկ եւ ռացիայով Ասկերանից օգնություն խնդրեցի: Օգնություն եկավ, բայց այլ ուղղությամբ: Երբ նորից վերադարձա իմ դիրքը, պարզվեց, որ ադրբեջանցիներն արդեն գրավել են մեր բարձունքը: 5 հոգի էին, որոնցից մեկը՝ ռուս: Այդտեղ էլ գնդացրային կրակոցներից վիրավորվեցի: Մի կերպ կարողացա կրակելով նահանջել»:*

Լյովա Վերդյանը վիրավորվել է Ասկերանում, հունիսի 13-ին: *«Մենք մեր գյուղում էինք՝ Բալլուջայում, երբ իմացանք, որ Ասկերանի վրա են հարձակվել: 30 հոգով անմիջապես օգնության գնացինք: Այդ ժամանակ արդեն բարձունքներ Ասկերանի, Նախիջեւանիկի եւ Խանաբադի զրահատեխնիկայից մի քանիսը գրավված էին: Մինչեւ մեր գալն այդ տեղամասը պաշտպանում էին միայն 20 հոգի, իսկ բարձունքը հազարից ավել էին: Մեր գալուց հետո (ուրիշ տղաներ էլ կային) արդեն մոտ 100 հոգի էինք: Միացյալ ուժերով մի քանի զրահատեխնիկա ազատագրեցինք եւ երբ արդեն պաշտպանվում էինք Նախիջեւանիկին օգնության գնալ վիրավորվեցի: Տղաները տեղափոխեցին Ստեփանակերտ, այնտեղից էլ ուղղաթիռով Երեւան»:*



Լուսանկարը՝ Ա.Ս.Ի.

Արկադի Եսայան: Վիրավորվել է հունվարի լույս 13-ի գիշերը Ղարաչինարում: *«Այդ ժամանակ Ղարաչինարի վրա դեռ լայնածավալ հարձակում չկար, ասենք օրվա նման սովորական գնդակոծություններ էին: Բնձ տեղափոխեցին Շահումյան: 13-ի առավոտյան արդեն բոլոր տեղերից նոր վիրավորներ բերեցին Շահումյանի հիվանդանոց, բայց իճնաթիռը սկսեց ռմբակոծել հիվանդանոցը: Մեզ տեղափոխեցին Գյուլիստան: Արդեն այդ ժամանակ տեսանք, որ երջանի ամբողջ բնակչությունը տեղափոխվել է Գյուլիստան, եւ իմացանք, որ բոլոր գյուղերը, բացի Շահումյանից ու Գյուլիստանից, գրավվել են: Մենք նախօրոք գիտեինք, որ մեծ հարձակում է սպասվում, բայց օգնություն այդպես էլ չստացանք: Ղարաչինարում ընդամենը մի տանկ ունեինք: Երբեմն մի քանի զրահամեքենաներ կային, որոնք երբեմն գալիս էին մեզ մոտ, մի քանի անգամ կրակում եւ հեռանում: Բայց այդ օրերին ո՞ւր կորան այդ զրահամեքենաները այդպես էլ չիմացանք: Իսկ մեր դեմ ռուսական բանակն էր կռվում: Ղարաչինարն ականապատել էինք, բայց դրանք չգիտես ինչու չգործեցին: Երեւի նրանք գիտեին, թե որ մասերն են ականապատված»:*

Արարատ Կիրակոսյան, Ալավերդիից: Վիրավորվել է Բուզլուխում հունիսի 13-ին: *«Արդեն 12-ի գիշերը իմացանք, որ մեզ վրա մեծ հարձակում է լինելու: Շահումյանից օգնություն խնդրեցինք, բայց չստացանք: Մենք մի 60-70 հոգի էինք, մեզ վրա հարձակվեցին մոտ 700 հոգով: Բայց դա ադրբեջանական բանակը չէր, այլ 4-րդ բանակը: Կարմիր բերետավորներ էին: Մենք ընդամենը բարձրից իջված մի հետեւակի մարտական մեքենա ունեինք, այն էլ մի քանի անգամ կրակելուց հետո խափանվեց: Իսկ նրանք շատ տանկեր ունեին: Երեւի դավաճանություն կար, որովհետեւ շատ է եղել, որ մի որեւէ բնդանոր ենք տանում որեւէ տեղ տեղադրում, նույն պահին ռդզաթիռը գալիս-ռմբակոծում է: Հունիսի 13-ին նույնիսկ երբ ռացիայով խոսում էինք մեր ընկերների հետ, մի բարձ մեր ընկավ եւ ասաց, թե գյուղն անդայման գրավելու են ու գիտեն, որ ընդամենը մի հետեւակի մարտական մեքենա ունենք 3 հոգի մեջը բնած: Բացի այդ էլ, ոչ մի տանկ չանցավ այն տեղերով, որոնք ականապատված էին: Բոլորը երջանցեցին»:*

Իհարկե, ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի, եւ մեղավորներից ոչ ոք պատժից չի խուսափի: Բայց վիրավոր այս տղաների առաջին ցանկությունը ոչ թե դա էր, այլ շտապիր աղաղակելն ու դիրքեր վերադառնալը: Այսօր պետք է կանգնեցնել հարձակումը, վերագրավել կորցրածը: Մնացածը՝ հետո:

Հ.Գ. Արդեն պատրաստվում էի դուրս գալ վիրավոր ազատամարտիկների հիվանդասենյակից, երբ ներս մտավ մի երիտասարդ՝ ձեռքին «Նարեկ» եւ «Էդոխա» թերթեր: «Նարեկը» հայերեն էր, ու վիրավորներն անմիջապես վերցրեցին մի օրինակ: Վերցրեցին ու... վճարեցին 3 ռուբլի, որը երիտասարդը համառորեն պահանջում էր:

ՀՀՇ-ի ճանաչման ժամանակը դեռ չի եկել, ե՞րբ է գալու

Մամուլի ասուլիս ՀՀՇ վարչությունում

Հունիսի 16-ի երեկոյան ՀՀՇ վարչության շենքում տեղի ունեցավ ՀՀՇ վարչության նախագահ Տեր Հուսիկ քահանա Լազարյանի եւ ՀՀՇ վարչության անդամ, պատգամավոր Էդուարդ Եգորյանի մամուլի ասուլիսը: Այն սկսվեց Հայոց համազգային շարժման վարչության հայտարարության ընթերցմամբ, որն ընդունվել էր դեռեւս հունիսի 13-ին: Նրանում մասնավորապես ասվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության արեւելյան եւ հյուսիսային սահմանների վրա Ադրբեջանի ծեռնարկած լայնածավալ հարձակումը ցույց է տալիս Ադրբեջանի նոր իշխանությունների որդեգրած քաղաքականության վճռականությունը, եւ այն անսպասելի չէր: Ըստ ՀՀՇ վարչության հայտարարության, այս գործողությունները նպատակ են հետապնդում ոչ միայն բարձրացնել իշխանության գլուխ անցած Աժճ-ի հեղինակությունը, այլեւ արցախյան հակամարտության միջազգային քննարկումներից առաջ գրել վերջին ամսվա իրադարձությունների առաջացրած անհպաստ տպավորությունը Ադրբեջանի ռազմական հզորության վերաբերյալ, որն այլեւս ի վիճակի չէ իրեն ենթարկելու ռազմական ամրոցի վերածված Արցախը: Հայտարարության մեջ ասվում է նաեւ, որ Ադրբեջանի իշխանությունները ձգտում են խափանել միջազգային հանրության հիմնահարցը խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու փորձերը: Ստեղծված պայմաններում, ասվում է հայտարարության մեջ, Արցախի եւ ողջ հայ ժողովրդի խնդիրը միանշանակ է վճռականորեն ետ մղել հարձակումը եւ ոչ միայն Ադրբեջանին, այլեւ ամբողջ աշխարհին մեկ անգամ եւս առաջարկել, որ ուժի դիրքերից արցախյան խնդիր լուծումն անհնարին է: Վերջում խոսվում է այն մասին, որ բոլոր քաղաքական կազմակերպությունները պետք է համախմբվեն վարչական եւ զինվորական կառույցների շուրջ եւ գործեն համախմբված, որովհետեւ «միասնությունն ու հավատն են մեր այսօրվա ուժը եւ վաղվա հաղթանակի գլխավոր երաշխիքը»:

Հայտարարության ընթերցումից հետո Հուսիկ քահանան խոսեց այն մասին, որ Արցախի խնդիրը հնարավոր չէ լուծել միայն ռազմական գործողություններով եւ զուգահեռաբար պետք է կատարվեն նաեւ համապատասխան քաղաքական քայլեր, մի բան, որը չի հաջողվել կատարել մայիսյան հաղթանակներից հետո: Շահումյանի եւ Մարտակերտի շրջանի 5 գյուղերի անկման մասին նա ասաց, որ մեղավորները, անշուշտ, կբացահայտվեն, բայց այսօր առաջնահերթ խնդիրը ոչ թե դա է, այլ շարունակվող հարձակումը կասեցնելը: Նա լրագրողներին հայտնեց նաեւ, որ հունիսի 15-ին Հայաստանի արտգործնախարարի տեղակալի մոտ է եղել ԱՄՆ-ի դեսպանը, որը հասկացնել է տվել, թե իրենք վերջին գործողությունները դիտում են որպես Ադրբեջանի կողմից պատասխան քայլեր:

Ասուլիսի ընթացքում հնչեցին բազմաթիվ հարցեր, որոնք ուղղված էին եւ պրն. Լազարյանին, եւ պրն. Եգորյանին: Մասնավորապես այն հարցին, թե ինչպե՞ս է վերաբերվում ՀՀՇ վարչությունն Ազգ. Բլեյանի այն համոզմունքին, թե Արցախին պետք է ինքնավարություն տվի Ադրբեջանի կազմում, Տեր Հուսիկ քահանա Լազարյանը պատասխանեց, որ դա նրա անձնական կարծիքն է, իսկ ՀՀՇ վարչությունը երբեք չի մերժել այլակարծությունը: Անորոշ պատասխան տվեց այն հարցին, թե արտասահմանյան շրջագայության ժամանակ ստեղծված իրավիճակի կապակցությամբ ի՞նչ հանդիպումներ է ունեցել հանրապետության նախագահը: Ասվեց միայն, որ նա 18 այդպիսի հանդիպում է ունեցել:

Լայինում քրդական ինքնավարության հռչակմանը վերաբերող հարցին՝ ի դեպ, պրն. Լազարյանը պատասխանեց, որ դա լուրջ չէ եւ ավելի շատ քարոզչական նշանակություն ունի, եւ կարելի է ասել, որ ՀՀՇ-ն պարզապես չի հասցրել կանխել այդ քայլը:

ՀՀՇ-ի դեմ այսօր հնչող բազմաթիվ մեղադրանքների առնչությամբ պրն. Լազարյանն ու պրն. Եգորյանը պատասխանեցին, որ այդպիսի շահարկումները շարունակվելու են Շահումյանի անկումից հետո: Նրանք ասացին նաեւ, որ Հայաստանի քաղաքականությունը պետք է թելադրի ոչ թե Արցախը, այլ մայր հայրենիքը: Ինչ վերաբերում է Ադրբեջանի ծեռնարկած լայնածավալ հարձակումներին եւ դրանցում ռուսական բանակի մասնակցությանը, ասացին նրանք, արդա ակնհայտ է, որ ամբողջ երկու դիվիզիաների մասնակցությունը չի կարելի բացատրել միայն կաշառքով, եւ հավանաբար Ռուսաստանի վրա միջազգային ասյաններում որոշակի ճնշում է գործադրվել:

Ազգային բոլոր ուժերի համախմբման վերաբերյալ հարց-հայտարարությամբ հանդես եկավ ԱԻՄ-ի ներկայացուցիչը, որն ասաց, թե ԱԻՄ-ը իր բոլոր կառույցները գործի դնելով կազմակերպում է կամավորական ջոկատների հավաքագրում, որոնք անդայման դրվելու են պաշտպանության նախարարության տրամադրության տակ: ԱԻՄ-ի ներկայացուցիչը խնդրեց պրն. Լազարյանին իր վերաբերմունքն արտահայտել դրա նկատմամբ, որին պրն. Լազարյանը պատասխանեց, թե կուսակցությունները պետք է միայն օժանդակեն պետությանը, բայց ոչ երբեք աշխատեն նրան զուգահեռ:

Ասուլիսի ժամանակ նորից արծարծվեց Հայաստանի կողմից ԼՂՀ ճանաչման հարցը, որին ՀՀՇ ներկայացուցիչները պատասխանեցին, որ իրականում դա ոչ թե ճանաչման հարց է, այլ ճանաչման պահի նպատակահարմարության: Պրն. Լազարյանն այս առթիվ ասաց նաեւ, որ մինչեւ Գերագույն խորհրդի առաջիկա նիստը ՀՀՇ վարչությունը կծշտի իր դիրքորոշումն այս հարցում, թեեւ անձամբ ինքը գտնում է, որ առայժմ ԼՂՀ-ի ճանաչման ժամանակը չի եկել, բացատրելով նրանով, որ ճանաչումն, իր կարծիքով, արցախյան խնդրի լուծման տարբերակների նվազեցում է միայն եւ չի նպաստի կրակի դադարեցմանը:

Ս. Բ.

Ադրբեջանում Թուրքիայի դեսպանը հերքում է

Ինչպես հաղորդեց «Թուրան» լրատվական գործակալությունը, Ադրբեջանում Թուրքիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալբրն Քարաման-օղլին հերքել է Հայաստանի պաշտոնական երջանակների եւ լրատվության զանգվածային միջոցների հաղորդագրությունները, թե թուրք ռազմական մասնագետները, ինչպես նաեւ Թուրքիայի քաղաքացիները մասնակցում են Ղարաբաղում ծավալվող մարտական գործողություններին եւ մեկում են ադրբեջանական բանակի ռազմական ծրագրերը: *«Այդ հաղորդագրությունները անհեթեթություն են,* հայտարարեց Ա. Քարաման-օղլին, *որոնց միջոցով պաշտոնական Երեւանը փորձում է իր ժողովրդից թաքցնել Լեռնային Ղարաբաղում կրած պարտությունները եւ միաժամանակ աշխարհի ժողովուրդների մեջ ատելություն առաջացնել Թուրքիայի եւ Ադրբեջանի նկատմամբ»:* ■

digitised by A.R.A.R.@

Շարունակվում է «վիուկների որը». մինչեւ ե՞րբ

Լուրը միանգամից տարածվեց ամբողջ Երեւանով: Հունիսի 16-ին ՀՀ հեռուստառադիոռեժիսվարչության լրատվական ծառայության գլխավոր տնօրեն Ռոբերտ Մավիսակալյանը հեռացվեց աշխատանքից:

Այս զարմանալի որոշումն ընդունել էր ՀՀ հեռուստառադիոռեժիսվարչության ղեկ Սամվել Գեւորգյանը: Անմիջապես փնտրեցինք այս զույգ անձնավորություններին մանրամասնություններին տեղեկանալու նպատակով, սակայն մեր բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Առաջինը բացարձակապես մերժում էր առայժմ որեւէ բացատրություն տալ, երկրորդին դժբախտաբար չհաջողվեց գտնել: Ստիպված դիմեցինք մեր սեփական ավանդական միջոցներին, ջանալով պարզել հարցի էությունը:

Նախ պարզվեց, որ Ռոբերտ Մավիսակալյանը ոչ թե «իր աշխատանքից էր հեռացվել», ինչպես գրում էր մեր պաշտոնական «Երկիր» օրաթերթը երեկվա համարում, այլ պարզապես «պաշտոնանկ» էր արվել: Ըստ մեզ հասած լուրերի, Սամվել Գեւորգյանը հունիսի 16-ին գումարված «կոլեգիայի նիստում» Մավիսակալյանին խիստ ննդադատել էր «անկարողության» համար եւ որոշել ազատել գլխավոր տնօրենի պաշտոնից:

Զարմանալի որոշում. նույն Սամվել Գեւորգյանը սրանից 8 կամ 10 օր առաջ էր կնքել մեկ տարվա պայմանագիր նույն Ռոբերտ Մավիսակալյանի հետ, երեւի թե հաշվի առնելով նրա «լրագրողական կարողություններ»:

Արդյոք ուրիշ պատճառ կա՞ «պրոֆեսիոնալիզմի պակասից» զատ:

Եթե դարձյալ հենվենք ոչ պաշտոնական աղբյուրների եւ «Երկիր» օրաթերթի «ենթադրությունների» վրա, պատկերը դարձյալ բավարար չափով չի պարզվում, քանի որ հեռուստատեսային բնագավառում փորձառություն ունեցողները գիտեն, թե հանրահավաքների, նույնիսկ եթե այն 23 դեսպանությունն է կազմակերպել, մասին «Լրաթեր»ով հայտնելը ոչ միայն պրոֆեսիոնալ պարտքն է յուրաքանչյուր լրագրողի, այլեւ դրա համար նախապայման է «առաջին տեղակալ» կոչված անձի ստորագրությունը:

Ուրեմն, եթե այստեղ կառավարության հետ 23 դեսպանության «համաձայն չլինելու» հանգամանքից անհանգստանալու հարցը կար, ինչո՞ւ Հայաստանի հեռուստատեսության վարչության պետի առաջին տեղակալն ընդունել եւ ստորագրել է այդ լուրը: Կամ եթե «հանցանք է գործվել», ուրեմն ինչո՞ւ նույն վերաբերմունքը չցուցաբերել ոչ թե գլխավոր տնօրենի, այլ Սամվել Գեւորգյանի առաջին տեղակալ Կարլեն Յալանուզյանի նկատմամբ:

Պարզապես կարծում ենք, որ «վիուկների որս» է սկսվել Երեւանում:

Մտահոգ ենք եւ ուզում ենք հարց տալ, թե վաղը կամ մյուս օրը ո՞վ հաշիվ պիտի տա ժողովրդին Խոջալուի դեպքերի ժամանակ Հայաստանի կորցրած լրատվական պատերազմի համար:

Երբ «Ազգ» թերթը սեփական միջոցներով, առանց պետական, նյութական, նույնիսկ բարոյական աջակցության արժանանալու, մենակ, օրերով գիշեր-ցերեկ Ֆրանսերենով, անգլերենով եւ թուրքերենով արտասահմանյան բազում լրատվական միջոցների ջանում էր տեղյակ պահել Հայաստանում կատարվող անցուդարձի մասին, Ռոբերտ Մավիսակալյանը նույնպես մեր գրասենյակից ամերիկյան CNN հեռուստաընկերությանը տեղեկություններ էր տալիս անգլերեն լեզվով, ո՞վ էր հեռաբրվում նրա «պրոֆեսիոնալիզմով», որը համենայնդեպս բավարարում էր միջազգային պահանջները, սակայն, ինչպես երեւում է, չի համապատասխանում մեր հեռուստառադիոյի վարչության պետի եւ բաս ուրիշ պետերի բարձրաձայն հիմքերին:

ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ՍՐԱՔՍ

Ինչպես հաղորդեցին ԼՂՀ ինֆորմացիայի ուժերի շտաբում, հունիսի 16-ին Մարտակերտի շրջանի վրա հարձակման ժամանակ Ռուսաստանի 4-րդ բանակի 23-րդ զորամիավորման տանկային խմբավորումը գրավել է Թալիշ, Տոնաշեն, Չայլու, Մատաղիս գյուղերը: Թալիշում, որ բացի տեղացի բնակիչներից կային մոտ 9 հազար փախստական Շահումյանի շրջանից, կան հարյուրավոր զոհեր: Ինչպես նշվում է ինֆորմացիայի շտաբի ամփոփագրում խաղաղ բնակչությունը գնդակոծվում էր տանկերց եւ հրետանուց: Հունիսի 16-ի երեկոյան հակահարձակման անցած հայկական ջոկատներին հաջողվել է հետ վերցնել Չայլու գյուղի մի մասը: Հունիսի 17-ի առավոտյան ստացած տվյալների համաձայն, հայկական ջոկատները գնդակոծել են ադրբեջանական կազմավորումները, թույլ չտալով նրանց ամրացնվել Թալիշ, Մատաղիս եւ Տոնաշեն գյուղերում: Մեծ կորուստներ են կրել եւ ադրբեջանցիները: Խփվել է մի քանի միավոր զրահատեխնիկա: Կատաղի մարտերը Մարտակերտի շրջանում շարունակվում են:

Հունիսի 15-ի երեկոյան ինֆորմացիայի հայկական ջոկատին հաջողվել է ազատագրել հունիսի 13-ին ադրբեջանցիների կողմից գրավված Սրխավենդ եւ Ղազանչի գյուղերը: Ընդ որում, խփվել է մինչեւ 10 միավոր զրահատեխնիկա: Ինչպես վկայում է գերիներից մեկը, 25-ամյա Նադիր Ռամանովը, ադրբեջանական բանակի կողմից մարտնչում են ԱՊՀ 4-րդ բանակի երկու գունդ, մեկը Շահումյանի, մյուսը Ասկերանի ուղղությամբ: Նրա խոսքերով, միայն Սրխավենդ գյուղի մոտ զոհվել է ադրբեջանական բանակի առնվազն 300 զինվորական, որոնց զգալի մասը ռուսներ են: Իսկ Ռուսաստանի կառավարությունը կտրուկ հերքում է, թե ԱՊՀ զորքերի կազմավորումները եւ ռուս վարձկանները չեն մասնակցում Ղարաբաղի դեմ կիրառվող ռազմագործությանը: Սակայն, ինչպես հաղորդեցին, որ հունիսի 16-ի ցերեկը ադրբեջանական բանակի երկու գումարտակ 20 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակում է ձեռնարկել Վարդենիսի շրջանի Զոդ գյուղի վրա: Հայաստանի իրավասու մարմինները նշեցին, որ զրահատեխնիկայի մեծ կուտակումներ կան Զանգելանի եւ Օդուբաղի շրջաններում: Երեւանում չեն բացառում, որ ադրբեջանական կազմավորումները պատրաստվում են ուղիղ միջանցք ճեղքել Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ: Հունիսի լույս 17-ի գիշերը եւ առավոտյան հրետանուց եւ «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Կաղանի, Գորիսի, Վարդենիսի, Վայքի, Կրասնոսելսկի եւ Տաուշի շրջանների գրեթե բոլոր սահմանամերձ գյուղերը: Բերդ շրջկենտրոնում զոհվել է 3 քաղաքացի, 4-ը վիրավորվել:

Ադրբեջանի պաշտպանության նախարարության տվյալներով, հունիսի լույս 16-ի գիշերը եւ առավոտյան համար մարտեր էին տեղի ունենում Ասկերան շրջկենտրոնի, Խանաբադ եւ Գյուլիստան գյուղերի մատույցներում: Նույն գիշեր ուժգին հրետակոծման են ենթարկվել Ղազախի, Զանգելանի, Թարարի, Ջերահիլի եւ Ֆիզուլու, ինչպես նաեւ Նախիջեւանի Սադարակի եւ Բաքվի շրջանների բնակավայրերը: ■

Երեւանի իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ հունիսի 16-ի ցերեկը ադրբեջանական բանակի երկու գումարտակ 20 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակում է ձեռնարկել Վարդենիսի շրջանի Զոդ գյուղի վրա: Հայաստանի իրավասու մարմինները նշեցին, որ զրա-

Ռազմաճակատի ծանր գիծ.

Բոլորը մատնացույց են անում ռուսական զորքին

կասի Ռուսաստանի կառավարությունը տասնյակ ռուս մայորերին, որոնք ցինկե դագաղներ կտանեն Ղարաբաղից: Ղարաբաղի Ասկերանի շրջանում ադրբեջանական ուժերը առաջվա պես պահում են շաբաթ եւ կիրակի օրերը գրաված Նախիջեւանիկ, Փիրջամալ, Աղբուլաղ, Առանգամին, Դահրազ գյուղերը: Սակայն ինֆորմացիայի հայկական ուժերը հակահարձակման են անցել, չնայած Աղդամից շարունակ կենդանի ուժ եւ տեխնիկա է ուղարկվում այդ բնակավայրերը:

Հունիսի 17-ի առավոտյան Ֆիզուլու շրջանի կողմից «Գրադ» կայանքներից հրթիռակոծվել են Սոս եւ Մաճկալաշեն հայկական գյուղերը: Միաժամանակ Գյուլափլու եւ Արդալ գյուղերում տեղակայված ադրբեջանական բազաներից փորձ է ձեռնարկվել գրավել Նոր Շեն գյուղը: Հարձակումը հետ է մղվել, խփվել է մեկ տանկ: Հայկական կողմից մեկ հոգի զոհվել է, երեքը վիրավորվել:

Ղարաբաղի մասնակցությունը կախված է երկու գործոններից

«ԻՖ»-ին տված հարցազրույցում Հայաստանի արտգործնախարարի տեղակալ Գեորգի Ղազինյանը կարծիք հայտնեց, թե ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությունը Մինսկում կայանալիք համաժողովին կախված կլինի երկու գործոններից: Առաջին պատրա՞ստ կլինի համաժողովի ղեկավարությունը Մարիո Ռաֆաելիի գլխավորությամբ պատշաճապես իրավիրել Ստեփանակերտին, երկրորդ ինչպիսի՞ն կլինի իրավիճակը շրջանում այդ պահին: Եթե Ադրբեջանի հարձակումը տարալվի, արդա դա կնշանակի, որ Ղարաբաղի ներկայացուցիչները մեկնեն Մինսկ, նշեց Գ. Ղազինյանը: Նրա կարծիքով, Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բոլոր նախկին փորձերի անհաջողության գլխավոր պատճառն այն է, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները դուրս էին մնում այդ գործընթացից: «Այնինչ, հենց Ստեփանակերտը եւ Բաքուն պետք է լինեն բոլոր բանակցությունների կողմերի դերում: Ուստի, առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցության, համաժողովը կկորցնի իր նշանակությունը եւ անհաջողության կմատնվի», նշեց Գ. Ղազինյանը: Ինչ վերաբերում է Հայաստանի մասնակցությանը Մինսկի համաժողովին, արդա երեւանը ոչ միայն պատրաստ է մասնակցել, այլ հենց սկզբից համառորեն ձգտում էր, որ այն ինչքան հնարավոր է շուտ հրավիրվի: «Մենք Մինսկի համաժողովը գնահատում ենք որպես խնդրի քաղաքական կարգավորման ընդունելի վայր», ասաց դիվանագետը: ■

Մինսկի համաժողովի ժամկետը կորոշվի Հռոմում

Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին, Լեռնային Ղարաբաղի կարգավորման ԵԱՀԽ-ի Մինսկի համաժողովի վերջնական ժամկետը պետք է որոշվի Հռոմում: Հունիսի 15-ին այնտեղ իր աշխատանքը վերսկսեց ԵԱՀԽ-ի մինսկյան խմբի նախնական արտակարգ հանդիպումը: Հռոմի հանդիպման առաջին փուլը տեղի ունեցավ հունիսի 1-5-ը, եւ սակայն ոչ մի արդյունք չտվեց Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքորոշման հակասությունների պատճառով: Ավելի վաղ նախատեսվում էր, որ համաժողովը տեղի կունենա Մինսկում, հունիսի 23-ին: Առայժմ այդ ժամկետը ուժի մեջ է: Սակայն, ինչպես գտնում է Ռուսաստանի արտգործնախարարության պատասխանատու աշխատակիցը, չի բացառվում, որ Մինսկի համաժողովը կհետաձգվի: «Ամեն ինչ կախված կլինի Հռոմում կայանալիք հանդիպումից», նշեց ռուսաստանցի դիվանագետը: ■

Ֆրանսիական մենեջմենթի դպրոցը տվեց առաջին շրջանավարտները

Ֆրանսիական մենեջմենթի դպրոցի առաջին շրջանավարտներն ստացան իրենց դիպլոմները: Երկու օր առաջ՝ հունիսի 16-ին, ժամը 12.30-ին, Երեւանի առեւտրաարդյունաբերական պալատում կազմակերպվել էր մի հանդիպում, ուր ներկա էին տեղացի եւ օտար հյուրեր: Այստեղ իրենց դիպլոմները ստացան դեռ մի տարի առաջ հիմնված մենեջմենթի դպրոցի առաջին շրջանավարտները: Հայաստանի Հանրապետության առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ պրն. Աշոտ Սարգսյանն իր բացման խոսքում հիշեց Ֆրանս-հայկական GIA կազմակերպության այս գործում ունեցած ներդրումը:

GIA միջմասնագիտական միավորումը հիմնադրվել է 1981 թ., որը նպատակ էր դրել իր կառուցվածքներում հայկական ծագում ունեցող զանազան բնագավառների մասնագետներին՝ գործարար մարդկանց, ձեռնարկատերերին, արդյունաբերողներին, առեւտրականներին, ճարտարպետներին, ինժեներներին, իրավաբաններին, բժիշկներին, ֆինանսիստներին միավորել:

Groupement Interprofessionel Arménien կազմակերպությունն այսօր ճանաչված է եւ գործում է հիմնականում Ֆրանսիայում, Եւրոպայի տարբեր երկներում, Լիբանանում եւ Իրանում: Այն իր ուժերը ծառայեցնում է Ֆրանսիական կազմակերպությունների կողմից Հայաստանին ցույց տվող եւ տվելիք օգնությանը, սատար կանգնում հայկական ուղղին:

1991 թ. մարտ ամսին Հայաստանի Հանրապետության առեւտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ ստեղծվել է Հայաստանի մենեջմենթի կենտրոնը՝ ՍԵՄԱ-ն, հանրապետությունում մենեջմենթի բնագավառում կադրեր պատրաստելու նպատակով: Պրն. Աշոտ Սարգսյանից ստացված տեղեկությունների համաձայն, 1991-92 թթ. ՍԵՄԱ կենտրոնում անց են կացվել 11 ցիկլեր հետեւյալ թեմաներով. ներածություն տնտեսության մասին, ձեռնարկության կազմակերպում, մենեջմենթ՝ առաջին մաս, մենեջմենթ՝ երկրորդ մաս, հաշվապահություն, բաշխում, արդյունաբերական արտադրության կառավարման մեթոդները, դրամ եւ բանկ, միջազգային առեւտուր, ընկերությունների իրավունքը:

Դասընթացներին, որոնք տեւեցին 12 ամիս եւ ամիսը 7 օր, մասնակցեցին 100 հոգի, որոնցից 11-ը արժանացան լիակատար մենեջմենթի դիպլոմին:

Ֆրանսիայի GIA կազմակերպության նախագահ պրն Մանուել Դեյիրմենջյանն իր ելնորհակալությունը հայտնեց ծրագիրն իրականացնելու համար եւ ասաց, թե *«այս դպրոցը պիտի շարունակի գործել նաեւ մյուս տարի եւ այս անգամ հատուկ գործիչներ պատրաստելու նպատակով, որ ուսուցումը պիտի տարվի իրենց կազմակերպության միջնորդությամբ, Ֆրանսիայի տարբեր մասնագետների կողմից»:*

Այս առթիվ նշենք, թե Ֆրանսիայի եւ Հայաստանի համագործակցությամբ ստեղծված մենեջմենթի՝ այս դպրոցում դասախոսել են Արեւմտյան բավականին հաջողությունների հասած մասնագետներ Սորբոնի եւ Անժեի համալսարանների տնտեսագիտության պրոֆեսոր Ժիրայր Աճեմյանը, GIA ընկերության գլխավոր գանձապահ Արթուր Քոչյանը, իրավագետ փաստաբան Դենի Քեջեջյանը, Փարիզի Սորբոն-2 համալսարանի դասախոս Ալեն Մարտերոն, միջազգային առեւտրական ընկերության տնօրեն Միշել Բազումյանը, ամերիկյան զբոսաշրջային գործակալության Ֆիրմայի տնօրեն Ֆաբրիս Ռուայը, Ֆրանսիայի մեխանիկական արդյունաբերության Ֆեդերացիայի խորհրդատու Միշել Սարաջյանը, Ֆրանսիայի ուսուցման կենտրոնի տնօրեն եւ Վաշինգտոնի համալսարանի դասախոս Հուրիկ Զաքարյանը, Բանկ դը Ֆրանսի տնօրեն Ռեյմոն Բենուան:

Երեւանում՝ Ֆրանսիայի դեսպանատի տիկին Մարի-Ֆրանս դը Արբենգի ներկայությամբ, հատուկ ելնորհակալություն հայտնվեց բարգմանիչներ Արուսյակ Ամիրջանյանին, Մերի Զարյանին եւ Գայանե Շահարյանին, որոնք մեծ ջանասիրությամբ էին կատարել իրենց աշխատանքը:

Ռ. Հ. Ա

Ռուսաստանը պետք է ունենա ավելի կառուցողական դիրքորոշում

Հունիսի 16-ին Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը Ռուսաստանի ղեկավարությանը կոչ արեց ընդունել ավելի կառուցողական դիրքորոշում Հայաստանի նկատմամբ, որը Ռուսաստանի եւ ԱՊՀ այլ երկրների հետ ստորագրել է Կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագիրը: Այժմ, երբ Հայաստանին սպառնում է Ադրբեջանի ռազմական ներխուժումը, Ռուսաստանը եւ պայմանագրի այլ մասնակիցները ոչ մի քայլ չեն ձեռնարկում: Մամուլի ասուլիսից հետո «ԻՖ»-ին տված հարցազրույցում Ֆ. Մամիկոնյանն ասաց, որ Հայաստանը վերջին իրադարձություններից ելնելով պետք է ճնարակի Լեռնային Ղարաբաղին լրացուցիչ օգնություն տրամադրելու հարցը, եթե նմանատիպ խնդրանք ստանա Ստեփանակերտից: Նա նշեց, որ մինչեւ վերջին ժամանակներս Լեռնային Ղարաբաղը ուներ բավարար միջոցներ ադրբեջանական բանակին դիմակայելու համար: Սակայն վերջին օրերի ընթացքում նյութական առավելությունը Բաքվի կողմն է: ■

digitised by A.R.A.R.@

Ինչ են ուզում մեզնից «մարգարեներն» ու «գուշակները»

Մարդկության պատմության ողջ ընթացքը եւ մեր ժամանակները ապացուցում են, որ *«զանգվածների գաղափարական դաստիարակության»* միջոցները, մոդելները չեն փոխել իրենց էական գծերը, փոխվել են միայն նրանց գունավորումը, ուղղվածությունը, գործելակերպը, մեթոդներն ու գործադրման ժամանակը, դրանք պարզապես հարմարեցվել են գործադրողների եւ «սպառման շուկայի» «ծարավ զանգվածների» ճաշակին ու պահանջներին:

Այսօր մեզանում մեծ արագությամբ է ընթանում հեղինակությունների, առաջնորդների հերթափոխությունը, փոխվում են հոգեւոր «պլատֆորմի» հենակետերը, բանվում նախկին սահմանները: Այս բառային իրավիճակում պարարտ հող են ստեղծում մտածողության, հոգեբանության, հոգեւոր արժեքների պարտադրված մոդելների ներդրման, շահագործման համար: Աճում է հետաքրքրությունը աստղագուշակների, կանխատեսումների, էքստրասենսների, պայծառատեսների, տարբեր մարգարեների, «Աստծո միջնորդների», նրա կողմից, «ուղարկվածների», գաղտնագիտության եւ այլ կարգի, եթե կարելի է անվանել «ոչ Ֆորմալ» գիտությունների հանդեմ, այն ամենի, ինչը դեռ երեկ արգելված, մերժված էր «լայն զանգվածների համար»:

Ի՞նչ է սա, հիմնարար գիտությունների ինքնաոչնչացման, գործածության երջանկների նեղացման արդյունքո՞ւմ, մարդու պատմական զարգացման հերթական պարույրին անցնելու արմատական փոփոխությունների զուգահեռ ընթացքո՞ւմ, դարաբաժանի, համամարդկային արժեքների ինքնատիպ փոփոխության, վերանայման օրինաչափ ընթացքո՞ւմ, թե՞ հոգեւոր զարգացման (առաջընթացի կամ հետընթացի) ցուցանիշ: Արդյոք գործի չե՞ն դրվել գաղափարահոգեբանական զինանոցի հինգորացված միջոցները, մոդելները:

«Նոյից եւ համաշխարհային ջրհեղեղից հետո, դա մոտ հազար եւ չորս դյուժին տարի է, եկավ ժամանակը Աբրահամի՝ նրա, ով բաների աչքում մեծագույն աստղագուշակ էր, առաջինը, ով հորինել է խալդական գրերը: Նրանից հետո եկավ Մովսես մարգարեն՝ աստղագուշակ...», կարդում ենք Նոստրադամուսի մոտ, «Ուղերձ Հենրիխ 2-ին»: Նոստրադամուսի կյանքի ու գործունեության գիտակները, մեկնողները պնդում են, որ վերջինիս գուշակությունների 90 տոկոսն իրականացել է ճշտությամբ: Հետաքրքիր է, որ Նոստրադամուսը հեղինակություն է եւ նրա կողմից խալդական գրերի (սուրարական գրերի) հայտնագործման մասին հայտարարությունը հավակնում է գտնվելու 90-ի մեջ:

Մյուս կողմից, Աբրահամը որպես հեղինակություն դրվում է միեւնույն հարթության վրա մեկ այլ հեղինակության աստվածաշնչային Մովսես մարգարեի հետ: Ահա կարծես չխարխլվող մի կառույց՝ հագեցած տարբեր ժամանակաշրջանների հեղինակությունների զուգակցումով:

Շրջանցելով խալդական գրերի (սուրարական սեղագրերի) մասին ցայսօր հայտնի գիտական փաստերի մանրամասները՝ չհիշատակելով հոգեվերլուծության եւ ոչ միայն այդ միջոցով ստացված տվյալները Հին կտակարանի ստեղծման, հեղինակի, գործող անձանց, իրական տարիքի եւ այլ հանգամանքներ, դիտարկելով Նոստրադամուսի ունեցած վերաբերմունքը Հին կտակարանի նկատմամբ դիմենք վերլուծության: «Հեղինակավոր» կարծիքից հետեւում է, որ սեմական լեզվաընտանիքին եւ լեզվամտածողությանը պատկանող անձը Աբրահամը, գրեթե ստեղծում հնդեւրոպական լեզվաընտանիքին, լեզվամտածողությանը պատկանող ցեղերի համար (տեսնես թե ինչո՞ւ): Նոստրադամուսի «պատմական մարգարեությունը» հնչում է այսպես՝ հայկական գրերի ստեղծողը ոչ թե Մեսրոպ Մաշտոցն է, այլ ինչ-որ մի ազգի կամ բարբար:

Խալդ-սուրարական մշակույթի օրինական տերերի, ժառանգորդների կողմից այդպիսի «ծառայությունների» ոմանց աննշան, անլուրջ թվացող անտեսումը կարող է ծանր հետեւանքներ ունենալ: Ասվածը բող չափազանցում չթվա, զի ժամանակի ընթացքում նման աննշան, անլուրջ փաստերը հատորներով աշխատություններ են դառնում այն էլ հեղինակավոր:

Վերջերս վաճառքի հանվեց «Վահագն» հրատարակչության կողմից լույս ընծայված *«Նոստրադամուսից մինչեւ Գլոբալ»* (ռուս. հեղինակ՝ Յան Պարամոնով) գրքույկը: Ծանոթությունից հետո ակնհայտ է դառնում, որ այն առաջին հերթին նպատակ ունի միջոցների մեջ խնայողություն չդնելով, բարձրացնել ռուսական ոգին: Գուշակություններից հետեւում է, որ դժվարություններից, աղետներից հետո ռուսների վերջնական, լիակատար հաղթանակն ու առավելությունները կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում մյուսների համեմատ անհերքելի են: Անհերքելիության պատկերը մոդելավորվում է Ավետայի (կեղծումներով), Նոստրադամուսի, Գլոբայի հեղինակությունների, բարձրյալի, ոչ նյութական ամենակարող ուժերի վրա հիմնվելով: Յան Պարամոնովին էլ չի հաջողվում յոլա գնալ առանց սեփականաշնորհման գործընթացի: Ահավասիկ, *«հազարամյակներ առաջ ԽՍՀՄ տարածքում գոյություն ուներ գիտելիքների սեփական, արմատական համակարգը՝ Ավետայական աստղագուշակությունը»*, կամ *«Զրադաշտ (Զորոաստր) մարգարեն ապրել է ասիական տափաստաններում՝ Վոլգայից արեւելք, մեր հայրենիքի տարածքում»* (նկատի ունի Ռուսաստանը): Գրքույկում հեղինակը կանգ չի առնում ոչ մի բանի առաջ եւ անհրաժեշտությունից ելնելով նույնացնում է, կամ տարանջատում ԽՍՀՄ ու Ռուսաստան հասկացությունները՝ ցանկացած էֆեկտը ստեղծելու նպատակով: Կարելի էր ասել՝ ասված իրենց ու Զրադաշտի հետ, բայց բերենք մի այլ օրինակ. *«Զրհոսի դարաշրջանի նախաշեմին մարդկությունը եւ հատկապես արիական ժողովուրդները, որոնք բնակվում են մեր երկրում (այդ թվում հրեաները, հայերը եւ այլն)...»*: Ցննդաբանական այս հայտնագործում-մերձեցումով ի՞նչ նպատակ է հետապնդվում եւ ընդհանուր առմամբ ի՞նչ է իրենից ներկայացնում Յ. Պարամոնովի «աշխատությունը», ի՞նչ է այդ «մարգարեությունների» հավաքածուն՝ բյուրիմացությունների, տգիտության հավաքածո՞ւ, թե՞ պատահականություն:

Շտապենք ասել, որ գոյություն ունի պատահականությունների օրինաչափություն, որը կարող է պարտադրվել որեւէ համակարգի, իսկ երկու դեպքի առկայության պայմաններում պատահականությունների օրինաչափությունները գործում են փոխկապակցված: Եւ վերջապես ամենակարեւորը, ի՞նչն է դրդել հայ հրատարակչին հայ ընթերցողին հրամցնել (այն էլ այս պայմաններում) այդպիսի մի գրքույկ: Անիրազեկությունը հետաքրքրականի հանդե՞ղ, պահանջարկի, շուկայի առկայությո՞ւնը, որը խոստանում է դրամական շահույթ:

Ամենեւին նպատակ չունենալով արգելք, տաբու դնելու ընթերցողի, ձեռնարեցի ազատ ընտրությանը, ուշադրություն հրավիրենք Յ. Պարամանովի եւ ոչ միայն նրա հեղինակած «մարգարեություն-գուշակությունների» բողոք հոգեբանական ազդեցությունների վրա: Գրքում անմիջականորեն տեղ են գտել «գուշակություններ» կազմված Անդրկովկասի, պատմական Հայաստանի (ներկայումս՝ Թուրքիա) տարածվելիք իրադարձությունների հետ: Դրանք անորոշ, խորհրդավոր, բայց ընդգրկված մոայլության, ողբերգականության ոգով են ներկայացնում մեր հայրենիքի աղագան: Եւ եթե ուշադրություն դարձնեք, ապա այդպիսին են գրեթե բոլոր «կանխատեսումները» կազմված Հայաստանի հետ (ճակատագրի, Ֆատումի կողմից դատապարտվածությունը, մարդու անզորությունը փոխելու սպասվելիք ահավոր, սարսափելի աղագան հատկապես ցայտուն է Նոստրադամուսի մոտ. *«Եթե մարդկությունն իմանար, թե իրեն ինչեր են սպասում, ապա չէր ցանկանա ապրել». «Ուղերձ Կեսարին»*, Նոստրադամուս): Դրանց նկատմամբ անգամ անչափ թերահավատ վերաբերմունք ունեցող սուբյեկտը, իրենից անկախ ենթագիտակցության շերտերում ամրացնելու նման տեղեկանք-գիտելիքը, հակված է «բազմացնելու» այն թե իր ներսում (հոգեվիճակ, նախատրամադրություն), թե շրջապատում (տեղեկատվություն), եթե կան արտաքին բարենպաստ պայմաններ՝ ստեղծելով հաղթական, տնտեսական, հոգեւոր ոչ կայուն վիճակ, ճգնաժամ: Հիշենք, թե ինչքան հաճախ ենք լսում տարբեր սոցիալական խավերի պատկանող մարդկանցից, *«Մենք աստծո կողմից մոռացված, մերժված ազգ ենք», «խաչված լինելը ճակատագիրն է»* կամ այլ նման անհեթեթություններ:

Իրենց «մասնագիտական» եւ զարգացման ընդհանուր մակարդակով ես չմնալով իրենց «կոլեգաներից», որոշակի խնդիրներ են հետապնդում, հոգեվիճակ ստեղծում նաեւ ժամանակակից թե հայրենական, թե արտասահմանյան «մարգարե-գուշակները»: Նրանց կանխատեսումներն են, որ այսօր առատորեն հրամցվում են մեզ լրատվության տարբեր միջոցների օգնությամբ:

Ինչ են տալիս նորօրյա «մարգարեությունները» բացի նրանից, որ լցնում են բերքերի երեսները, դառնում դրամական շահույթի աղբյուր, ստեղծում ինչ-որ մեկին անհրաժեշտ հոգեբանական Ֆոն: Ի՞նչ նպատակ են հետապնդում այն «մարգարե-գուշակները», որոնք 1988 թ.-ից հետո պարբերաբար նոր ավերիչ երկրաշարժ են «գուշակում» եւ դրա մասին լուրեր տարածում:

Գաղափարահոգեբանական, մշակութային եւ դրանից բխող այլ պտղների վրա «խաղաղ ներգործության, ազդեցության» զինանոցը եկան հարստացնելու նոր, նորացված միջոցներ՝ «մարգարեներն» ու նրանց «մարգարեությունները»: Վերջիններս ոչ պակաս վտանգավոր են, քան «ավանդական» մյուս միջոցները:

Ուստի, որպես դրան հակակշիռ, հարկավոր է վերականգնել մեր տեսակի (ցեղի, ազգի) կենսագործունեությունն ապահովող սեփական մոդելները (հոգեբանություն, գիտակցություն եւ այլն), վերականգնել խզված կապը արմատական արժեքների հետ եւ ներկան ու ապագան կառուցել միայն դրանցից, ելնելով, հենվելով դրանց վրա: Այդ աշխատանքի արդյունքները պետք է հասու լինեն բոլորին, անկախ սոցիալական, տարիքային եւ այլ սահմանափակումներից: Կարծ կարելի է այդ ընթացքը ազգակերտում անվանել: Կատարելով եւ շարունակաբար իրականացնելով «հսկողություն» ներքին ու արտաքին, հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգեւոր, մշակութային կյանքի ընթացքի վրա՝ ինքնաստեղծյան կառավարվելիք պարտադրված, մեզ համար կործանարար մոդելների ներմուծումից, գերծ ազդեցությունից:

Այսօրեւեթ, անհապաղ, այն էլ պետական մակարդակով, պետք է ձեռնամուխ լինել բազմաճյուղ-բազմաբնույթ համակարգված մի կառույցի՝ ազգակերտման ինստիտուտի ստեղծմանը, որտեղ աշխատող բոլոր «մարգարեներն» ու «գուշակները» ունենան մեկ հոգս, մեկ նպատակ՝ հայ տեսակի ներկայի ու ապագայի կերտումը:

ԹՍՄԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Հայաստանը» նրանց հետ է

Այլեւս մենակ չեն մնա այն 14 երեխաները, որոնց հայրերն ընկան տարբեր շրջաններում, մեր պետականության կառուցման ճանապարհին զինվորագրված ազգային-ազատագրական պայքարին:

Սրանցից շատերն աննկատ են մնում հասարակության աչքերից: Սակայն, ահա, գտնվեց մի կազմակերպություն, որն անուշադրության ճանկերից դուրս հանեց հինգ ազատամարտիկների՝ Հրանտ Ասատրյանի, Աշոտ Սահակյանի, Անուշավան Գրիգորյանի, Սերգեյ Գրիգորյանի եւ Վազգեն Վարդանյանի ընտանիքներին՝ նրանց երաշխավորելով թե՛ բարոյական եւ թե՛ նյութական օգնություն, ամսական 1000 ռ. տրամադրելով այդ ընտանիքներին, մինչեւ երեխաների չափահաս դառնալը: Մտահղացման հեղինակն է երիտասարդական ձեռնարկությունների «Հայաստան» ասոցիացիան:

«Տարբեր առիթներով իմացանք անուշադրության մատնված այդ հինգ ազատամարտիկների ընտանիքների մասին, որոնք ցայսօր չեն օգտվել ոչ մի կարգի մարդասիրական օգնությունից, ասում է ասոցիացիայի նախագահ Լ. Եսայանը: Եւ ահա մեր մեջ մտահղացավ այդ նախաձեռնությունը: Իրավունք չունենք պարզապես մոռանալու որեւէ մեկին, բայց քանի որ մեր ուժերն անսահման չեն, մենք վերցրեցինք հինգ ընտանիքների խնամակալությունը»:

ՋԵՄՍ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Անգլիայի ազդեցիկ օրաթերթերից «The Independent»ի 1992 թ. ապրիլի 4-ի կիրակնօրյա համարում «Հայերի ողջակիզումը» վերնագրով լույս տեսավ չափազանց ուշագրավ մի հոդված՝ Ռոբերտ Ֆիսքի ստորագրությամբ: Լուսանկարները կատարել է Իզաբել Էլսոնը: Վերնագրի տակ, որպես ենթավերնագիր գրված է հետեւյալը. «Դարի առաջին ողջակիզումը տեղի ունեցավ ոչ թե Գերմանիայում, այլ Թուրքահայաստանում, որտեղ Օսմանյան կայսրության կառավարությունը ցեղասպանություն կազմակերպեց հայ քրիստոնյաների դեմ: Սպանություններն իրենց բարձրակետին հասան 1915-ին, երբ մեկ միլիոն տղամարդիկ, կանայք եւ երեխաներ մահացան»:

Այս բացառիկ հոդվածի բարգմանությունը որոշ կրճատումներով հանձնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

Մարդաթայի բլուրը սեւ, հրաբխային ժայռակույտերի մի գահավիժում է, բացված լույսի եւ թանձր սվերի մի վայր կախված սիրիական արեւելյան անապատի վրա: Գագաթը ցուրտ է, ձմռան անձրեւը ծեղեր է բացել ցեխի եւ ժայռերի միջեւ, հսկա, գորշ կիրճեր, որոնք գալարվում են մինչեւ բլրակի ստորոտը: Ներքեւը, հեռվում, խարույր գեսը հոսում է գորշ ու լերկ ափերով, որոնք մութ ավազաթմբերի միջեւ դառնալով սեւ-մութ գաղտնիքների գեսը: Հարկ չկա իմանալու, թե ինչ է կատարվել այստեղ 77 տարի առաջ, տեղյակ լինելու համար դժոխային մի ոճրագործության կատարված այս ափերում: Արեւելյան Լեհաստանի անտառների նման Մարդաթայի բլուրը արտախիլ հիշողության վայր է: Բայց տեղական սիրիական ոստիկանության, պետը լսածներից հիշում է, թե ինչ ահավոր բան է կատարվել այստեղ իր ծնվելուց առաջ:

Մարդաթա մեր ժամանման օրն իսկ, մեր նկարիչ Իզաբել Էլսոնը գտավ այդ սարսափելի իրողության փաստը: Մտնելով անձրեւներից առաջացած նեղ կիրճերից մեկի սահմաններից ներս, նա ցանկացավ ձեռքերը արբել գորշ հողով եւ դեմ հանդիման գտավ գորշ գանգ, որի ատամները դեռ փայլում էին: Չախ կողմում ջարդված էր կմախքի ողնաշարը:

Երբ հողը մի քիչ փորեցի, հայտնաբերվեցին նորանոր կմախքներ, որոնք այնքան շաս էին, որ հնարավոր չէր զանազանել իրարից:

Ամեն մի քիզ հողի տակից կարելի էր գտնել ազդոսկր, կողոսկր, ատամներով կզակ, իրար մեջ սեղմված, իրար կաղկղած ոսքեր: այնպես, ինչպես սպանվեցին նրանք այն սեւ օրը եւ հազարներով գահավիժեցին կիրճն ի վար: Հողից հանված, բաց օդի մեջ այդ ոսկորները, ամբողջ մի ցեղի դիակները փշրվում էին, հալվում անհետանում այնքան հեզասահ, այնպես, ինչպես իրենց թուրք ջարդարարները կցանկանային, որ մենք մոռանայինք կատարվածը:

Այս փոքրիկ տարածության վրա 50 հազար հայեր են սպանված եւ մի քանի վայրկյանի ընթացքում զգացինք, որ կանգնած ենք հավաքական գերեզմանի վրա: Իսկապես: Մարդաթան եւ շրջապատի սիրիական անապատը, ինչպես նաեւ Թուրքահայաստանի հազարավոր գյուղերն ու ավանները դարձել էին հայ ժողովրդի ողջակիզման օսվենցիումները: Վայրը աշխարհի առաջին, բայց մոռացված ցեղասպանության:

Այստեղ, Մարդաթայի այս բլրի վրա, կանգնած էինք մենք հայերի գերեզմանների վրա: Եւ Պողոս Տագեսյանը, որ իր հինգ տարեկան երեխայի Հակոբի հետ Դեր էլ Զորից մինչեւ այստեղ առաջնորդում էր մեզ, լավատեղյակ էր այն «եղերական միջոցառումներին»: Թուրքերը բոլոր ընտանիքներին բերեցին այստեղ սպանելու համար: Այդ տեւեց շաս օրեր: Երկար շարքերով իրար էին կապում նրանց, տղամարդկանց, կանանց, մանուկներին, որոնց մեծ մասը հիվանդ էր ու սովահար, շատերը մերկ: Հետո բլրի գագաթից ցած էին նետում



ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂՋԱԿԻԶՈՒՄԸ

Անգլիական թերթը պատմում է հայերի ցեղասպանության մասին

...թոմի գեսը, գնդակ արձակելով նրանից մեկի վրա, որը, իր հերթին, ցած նկնելու պահին իր հետ պետք է քաշեր ...ալ մյուսներին: Էժան ձեւ էր: Մեկ ...ամփուշտի ծախս միայն:

Տագեսյանը ծնկի իջավ հողին, իր ...թենայի բանալիով փորեց հողը եւ ...նեց ուրիշ մի գանգ: Եթե այս նա...դասությունը հիվանդագին թվա, ...պետք չէ սակայն մոռանալ, որ հայ ժո...ովուրդը ցեղասպանության ճանաչումը ...այցեց յոթ տասնամյակ, առանց ար...յունքի: Ահա թե ինչու չարիքի փաստը ...եռազանցում է բոլոր զգայությունները: ...երբ մատներով մարեց հողը աչքերի խո...նչներից եւ ասամնաբարից, Տագեսյա...ը գանգը մեկնեց Հակոբին, որը ակ...նարիշ կանգնած էր փոսում, անտեղյակ ...ահվան իմաստին: «Ես ասել եմ նրան, ...թե ինչ է կատարվել այստեղ», ասաց Տագեսյանը:

«Պետք է սովորի հասկանալու հա...մար»: Հակոբը կրում էր իր պապիկի ...հոր անունը: Պողոս Տագեսյանի մեծ ...հոր, որ զոհն էր դարձել առաջին ցե...ղասպանության, գլխատվել Մարաղի մեջ 1915-ին, մի թուրք ոստիկանի կող...մից:

Սակայն այս զարհուրելի վայրը լոկ անցյալի վկայությունը չէր տալիս, այլ նաեւ նախազգուշացումը ապագայի: Միայն մի քանի ժամ առաջ Դեր Զորի չթափոր զարդարանք ունեցող միակ մա...քուր հյուրանոցում հեռուստացույցով դի...տեցի աղոտ մի տեսաժապավեն, ձյան վրա փռված դիակների նկար. ազերի տղամարդիկ, կանայք, երեխաներ, իբրեւ թե սպանված հայերի կողմից, Լեռնային Ղարաբաղում, հազիվ երեք օր ա...ռաջ: Եթե Օսմանյան կայսրության չարիքը բացահայտված էր սիրիական անապատում, նրա ազդեցությունը շարունակվում էր խորհրդային կայսրության փլատակների տակ. Մարաղայի բլուրից 500 մղոն հյուսիս: Լեռնային Ղարաբաղի դիակները քավության նոխա՞զն է՝ ...մեր շուրջը փշրվող կմախքների: Սահվան այս վայրը ի՞նչ չարագուշակ բան էր պարունակում հայ-թուրքական կռվի ամբողջության մեջ:

Դժվար չէ պատասխաններ գտնել Բեյրութի հյուրանոցում, առաջին ողջակիզման վերջին վերապրողները ապրում են իրենց վկայությունների հետ՝ լիբանանյան 15 տարվա քաղաքացիական պատերազմի մղձավանջին զուգահեռ: Դուք այստեղ կգտնեք Զահար Պետրոսյանին, լույսից զուրկ մի սենյակի մեջ, ուր էլեկտրական մի ծող իզուր կայծկլտում է սաղը ներքնամասի մեջ: 89 տարեկան հայ ծերունին ինքն իրեն ծածկել է մի հին վերարկուով եւ սեւեռուն դիտում է իր այցելուներին կույր աչքերով:

Ահա նրա պատմությունն այնպես, ինչպես պատմեց մեզ: «1915-ին 12 տարեկան էի եւ ապրում էի Պիրեճիկում, Եփրատի ափին: Ունեի չորս եղբայրներ: Հայրս սափրիչ էր: Ինչ տեսա այդ օրը, երբ թուրք ոստիկանները եկան մեր գյուղը, բոլորովին չեմ կարող մոռանալ: Դեռ տեսողությունս չէի կորցրել: Պիրեճիկի մեջ կար մի շուկա, որ այրել էին. գետնին մնում էին քարեր եւ շենքի աղյուսները: Աչքերովս տեսա, թե ինչ պատահեց: Տղամարդկանց հրամայեցին հեռանալ գյուղից, նրանք քվեցին-հեռացան եւ բոլորովին չերեւացին: Կանանց եւ երեխաներին հրամայեցին գնալ հին շուկան: Ապա եկան զինվորները եւ երեխաներին իրենց ծնողների աչքի առջեւ մեկ-մեկ հավաքեցին, թերեւս երեխաները 6, 7 կամ 8 տարեկան էին, օդ նետեցին նրանց, որպեսզի ընկնեն քարերի վրա: Եթե ողջ էին մնում, թուրք զինվորները վերեւից հավաքում էին նրանց եւ ոտքի հարվածներով ու քարերով ջարդում նրանց ուղեղները: Այս բոլորը նրանք արեցին, լսո՞ւմ եք, երեխաների մայրերի աչքի առջեւ»: Հավանաբար իր տարիքի պատճառով էր, որ Պետրոսյանի ձայնը հուզմունքի նշան ցույց չի տալիս: «Սափրիչի մեր վարսավիրանոցից ես տեսա այդ բոլոր տեսարանները: Թուրք զինվորները համազգեստով էին, նրանց կողքին էին կառավարական ոստիկանները: Անշուշտ, մայրերը ոչինչ չէին կարող անել, երբ իրենց երեխաներին այդպես սպանում էին: Նրանք պարզապես գոռում էին, լալիս: Մենք վերադարձանք, որովհետեւ հայրս կրոնափոխ դարձավ: Ընդունեց մահմեդականությունը: Սակայն հայրս եւ մայրս հիվանդացան: Կարծեմ խոլերայի վարակից: Մահացան: Ես էլ հիվանդացա եւ կարծեք մեռյալ լինեի: Տարագրությունները շարունակվեցին, եւ ես էլ մեռած կլինեի, եթե մի թուրք ուսելիք չտար»: Վերջապես, Պետրոսյանին որքանոց էին տարել: «Լոգանք ընդունեցի, բայց ջուրը կեղտոտ էր», ասաց նա: «Նույն բաղնիքում լոգանք էին արել երեխաները, որոնք կլոռոմա (խաժախս) ունեին: Այսպես ես էլ լոգանք արեցի նույն ջրում եւ կուրացա: Դրանից հետո չեմ տեսնում: Այդ ժամանակվանից սպասում եմ, որ վերագտնեմ տեսողությունս: Բայց գիտեմ, թե ինչու կուրացա: Լոգանքը չէր պատճառը, այլ որովհետեւ հայրս կրոնափոխ էր եղել: Ասված լուծեց իր վրեժը, որովհետեւ լքեցին իրեն»: Զահար Պետրոսյանը այլեւս բոլորովին չի տեսնելու: Նրա աչքերը բացակա են. դժգույն, կանաչ մաշկով է ծածկված այն տեղը, ուր պետք է լինեին նրա բիբերը:

Այլ տեսակի կուրություն էր պատել նրանց, որոնք պետք է հասկանային այդ դեպքերի իմաստը: Հայերի ողբերգությունը եւ նրանց զանգվածային կոտորածը օսմանյան թուրքերի կողմից մեծ մասամբ մոռացության էր մատնվել Արեւմուտքում եւ մթագնվել նմանօրինակ եւ ավելի մեծ չափի հրեական սպանդով, որ սկսվեց Եւրոպայում հայկական եղեռնից մոտ 30 տարի անց:

Թուրքիան բոլորովին չընդունեց աշխարհի առաջին ցեղասպանության հանցանքի պատասխանատվությունը եւ ոչ էլ որեւէ արդարություն հանդես բերեց հայերի նկատմամբ՝ առաջին աշխարհամարտի վերջերում Օսմանյան կայսրության կործանումից հետո:

Նյուրնբերգյան դատավարություններ չեղան հայերին կոտորող մարդասպանների նկատմամբ եւ փոխհատուցումներ չեղան հայերի իրավունքների եւ ունեցվածքների դիմաց: Միայն մեկ եւ կես միլիոն կմախքներ, որոնց գոյությունն իսկ թուրքերը ավելի ուշ պիտի փորձեին ուրանալ:

Բեյրութի կույրերի տանը 91-ամյա Նվարդ Սրուրյանը պպահում է իր հոր նկարը, գեղեցիկ մի տղամարդ թուրքական բանակի համազգեստով: Սրուրյանը գրեթե խուլ է: «Հայրս հոյակապ մարդ է եւ չափազանց խելացի, ասում է նա: Երբ թուրքերը 1915-ին հարձակվեցին մեր ընտանիքի վրա, նա նորից հագավ զինվորական իր նախկին համազգեստը, մայրս կարեց կրծքանշանները, ցույց տալու համար, որ նա բարձրաստիճանավոր էր: Նա կրեց իր չորս շքանշանները, որ շահել էր որպես զինվոր: Այս համազգեստով բոլորիս տարավ Քոնիայի երգեսով բոլորիս տարավ Քոնիայի երկաթուղային կայարանը, գնացք նստեցրեց եւ մենք փրկվեցինք: Սակայն ինքը մնաց: Թուրքերը իմացան կատարվածի մասին: Նրանք նրան մահապատժի ենթարկեցին»:

Հայկական քաղաքներում եւ գյուղերում զինվորները քշում-հեռացնում էին տղամարդկանց, հրացանագուրկ անում, նետում հասարակական գերեզմանները կամ գետերի մեջ: Մայրենի Գալստյանը 88 տարեկան է. թույլ էակ, մազերը գլխատորով կապած, ֆիզիկապես դողում է, երբ պատմում էր իր պատմությունը կույրերին հասկացված տան մեջ:

«Ես Մուշից եմ, ասաց նա: Ամեն տարի, երբ ձյունը հալում էր, մենք գարի էինք ցանում: Հայրս, Մանուկ Թարոյանը եւ եղբայրս աշխատում էին դաշտերում: Հետո եկան թուրք զինվորները: 1915-ն էր: Նրանք գյուղի բոլոր տղամարդկանց՝ մոտ հազար հոգու տեղավորեցին մի ախոռի մեջ եւ հաջորդ առավոտյան քշեցին Մուշից, իմ բոլոր տղամարդ բարեկամներին, զարմիկներին եւ եղբայրներին: Հայրս նրանց հետ էր: Թուրքերը ասացին. «Պետությունը ձեր կարիքն ունի»: Նրանց քշեցին անասունների նման:

Խաբուքն էր, Մուշեղի մայրը, որ հայտնաբերեց, թե ինչ պատահեց նրանց: «Մուշի մոտ կար մի տեղ, ուր երեք գետերը իրար էին միանում ու անցնում մի կամրջի տակով: Ջրի եւ անվազի մի մեծ վայր էր այն: Առավոտյան մայրս գնաց այնտեղ եւ տեսավ մեր տղամարդկանց, որոնք կանգնել էին կամրջի ամբողջ երկարությամբ: Հետո զինվորները երկու կողմերից կրակեցին նրանց վրա: Ես հիշում եմ, թե ինչ պատմեց ինձ մայրս: Նա ասաց, թե հայերը ծղոտի նման իրար վրա ընկան»: Թուրքերը վերցրին նրանց հագուստները ու արժեքավոր իրերը եւ հետո դիակները նետեցին ջրի մեջ: Ամբողջ օրն այսպես շարեցին Մուշի բոլոր տղամարդկանց, իսկ այս պատկերը կրկնվեց մինչեւ մթնշաղ: Երբ մայրս մեզ մոտ վերադարձավ, ասաց. «Մենք էլ պետք է գետ վերադառնանք եւ մեզ նետենք նրա մեջ»:

Այն, ինչ որ Մայրենին նկարագրում էր, պատերազմական եզակի ոճիր չէր: Սովորական երեւույթ էր: Կերմախի կիրճում իրական ու թուրքական 86-րդ հեծելազորային ջոկատը մորթեց ավելի քան 20 հազար կանանց եւ երեխաների: Բիթլիսում թուրքերը ավելի քան 900 կին խեղդամահ արեցին Տիգրիս գետում:

Սրբուհի Փափազյանը ցույց է տալիս իր հոր կողմից ձեռքի դաջվածքը, որով տարագիր ընտանիքի անդամները պիտի գտնեին իրար:

Այնքան մեծ էր կոտորածը երգնկա քաղաքի մոտ եւ եփրատ գետի մեջ նետված հազարավոր դիակները այնպես պատնեշ էին ստեղծել, որ գետը սպիտված էր հարյուրավոր կանգուն փոխել իր հունը:

Կոստանդնուպոլսի այն ժամանակվա Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն վկայում է, թե ինչ պատահեց հետագայում. «Վերջնական եւ ամենավաս միջոցը, որ կիրառվեց հայերի նկատմամբ, ամբողջ ժողովրդի զանգվածային տարագրությունն էր իր հայրենի օջախից եւ նրանց ախոռը դեպի անապատ՝ ծանապարհի բոլոր արհավիրքներով: Նրանց տեղափոխության եւ սննդի համար ոչ մի միջոցառում չէր ձեռնարկված...

Ընտանիքներին բաժանում էին, տղամարդկանց սպանում, կանանց եւ աղջիկներին բռնաբարում կամ ուղարկում հարեմներ: Երեխաներին նետում էին գետերը եւ կամ վաճառում օտարականներին...»:

Տղամարդկանց սպանություններից հետո Մայրենի Գալստյանը իր մոր, քույրերի՝ Մեխակի, Տիկադարի, Հերիքոյի եւ Արզունի, իր կրտսեր երկու եղբայրների Ջիվանի եւ Ֆերհատի հետ մահվան ճամփան բռնեցին Մուշից: «Սկզբում մենք ուղեւորվեցինք եզներով լծված սայլերով: Ապա շաբաթներ շարունակ մենք ստիպված էինք քայլել: Հազարներով էինք: Մենք ջուր եւ հաց էինք մուրում:

Տաք էր: Գարնանն էր, որ ճանապարհվեցինք եւ առանց դադարի քայլեցինք մինչեւ դեկտեմբեր՝ Ս Հակոբի օրը: Ես 12 տարեկան էի, երբ կորցրի մորս: Ես իրեն այլեւս չտեսա: Հետո եղբայրներս, քույրերս եւ ես խոլերայով հիվանդացանք: Նրանք մեռան, բացի Արզունից եւ ինձանից: Ես նրան եւս կորցրի: Ինձ որքանոց տարան: Դուք երբեք չեք կարող պատկերացնել, թե ինչպիսին էր մեր կյանքը: Թուրքերը ավազակներին թույլ տվին անել իրենց ցանկացած ամեն ինչ: Քրդերին թույլատրված էր առեւանգել գեղեցիկ աղջիկներին: Ես հիշում եմ, թե ինչպես էին ձիու թամբին կապած տանում նրանց: Նրանք տարան երեխաներին: Թուրքերը սիրում էին, որ վճարենք ջրի համար»:

Այժմ մեծ մասամբ մոռացության է մատնվել այն հանգամանքը, թե ինչպես թուրքերը խրախուսում էին քրդերին մահմեդական իրենց ցեղակիցներին, միանալ այս կոտորածին: Բռնաբարություններին եւ թալանին զուգահեռ քրդերը տասնյակ հազարավոր հայեր կոտորեցին: Մարաղայից ոչ շատ հեռու, Խաղուր գետի գետաբերանին, հայ կանայք վաճառվեցին քրդերին եւ մահմեդական ադաբներին: Արհավիրքից վերապրողները պատմում էին, թե տղամարդիկ 20 դուրուշ էին վճարում կույսերի համար եւ միայն 5 դուրուշ բռնաբարված երեխաների եւ կանանց համար: Ավելի տարեցներին, որոնցից շատերը ունեին ծծկեր երեխաներ, բերեցին դեպի գետը եւ խեղդեցին:

Մարաղայից 100 մղոն հարավ, Իրանի սահմանից 20 մղոն հեռավորության վրա կար կավե խրճիթներով մի գյուղ, սահմանին այնքան մոտ, որ անցյալ տարի Սիրիայի գյուղացիները ի վիճակի էին հետեւելու գիշերային խավարում արձակված Սաղդամի հրթիռների լուսարձակներին: Մենք այնտեղ գտանք Սրբուհի Փափազյանին, հայկական ցեղասպանությունից փրկված մի այրի կնոջ, որի ամուսինը՝ մի մահմեդական արաբ, իրեն փրկել էր Դեր էլ Զորում: Նիհար, բայց խիստ աշխույժ, անասամ կին էր, որ կարծում էր, թե 100 տարեկան է: Մենք հաշվեցինք, որ նա հավանաբար 92 տարեկան պետք է լինի, բայց իր պատմածները վեր էին ամեն կասկածից:

«Ես Թաֆիրայից եմ, Սամբուլից ձիով 12 ժամ հեռու, ասաց նա: Ես այդ ժամանակ 15 տարեկան էի: Թուրքերը մեր տնից քշեցին մեզ եւ մեր ընտանիքները խցկեցին մի կեղտոտ նավի մեջ, որ Քոնիայից մեզ բերեց Հալեպ, մորս՝ Ռենուհիին, հորս՝ Թադեւոսին, հորեղբորս՝ Ազգազին եւ քույրերիս՝ Վարդուհուն եւ Եւային: Մեզ ծեծեցին եւ սովամահ արին: Հալեպում մայրս եւ հորեղբայրս՝ Ազգազը հիվանդությունից մահացան: Մեզ ստիպեցին, որ ամառվա շոգ օրեր շարունակ քայլենք Դեր էլ Զորի անապատում: Թուրքերը մեզ պահեցին մի գաղթականի մեջ: Ամեն օր նրանք գալիս եւ հազարավոր հայեր էին տանում հյուսիս: Հայրս սարսափելի պատմություններ լսեց սպանվող ընտանիքների մասին եւ այդ պատճառով հայրենով մեր անվան սկզբնատառը դաջեց մեր ձեռքին, որպեսզի հետագայում կարողանային իրար գտնել»:

Սրբուհի Փափազյանը փրկվեց մի արաբ տղայի կողմից, շատ հայ կանանց նման, որոնք առասան գտան ոչ թուրք մահմեդականների մոտ, եւ ընդունեց մահմեդականությունը: Եւ միայն հետո իմացավ, թե ինչ էր պատահել իր ընտանիքին: «Թուրքերը բոլորին քշեցին հյուսիս, դեպի անապատը, ասաց նա: Մյուսների նման նրանց էլ կապեցին իրարից, իսկ Վարդուհուն եւ Եւային՝ իրենց դասակներից: Հետո տարել էին Մարաղայի բարձունքը, որտեղ արդեն կային բազմաթիվ դիակներ: Այնուհետեւ նետել էին ցեխոտ գետի մեջ եւ կրակել նրանցից մեկի վրա, սակայն չգիտեմ, որ մեկի, այսպիսով բոլորը միասին այնտեղ խեղդամահ եղան»:

Նրանց մարմինները մինչեւ այսօր մնում են Մարաղայի փափուկ հողերում: Սակայն հայերի սպանությունների դաշտերը փռված են սիրիական անապատի ամբողջ տարածքում: 50 մղոն դեպի հյուսիս, Շեշտատի գյուղից արեւելք, գտնվում է մի փոքրիկ օազիսում, քարայր, որի մեջ թուրք զինվորները հազարավոր հայեր քշեցին տարագրության ընթացքում:

Պողոս Տագեսյանը եւ ես հետեւությամբ գտանք այդ տեղը, որ այժմ սիրիական նավթի հորատման վայրի մի կենտրոն է: Քարայրի մի մասը փլված է, այնուհանդերձ, հնարավոր եղավ սողալ ժայռամուտքից ներս եւ հրահանի լույսի օգնությամբ շարժվել դեպի չարագուշակ քարայրի խորքը: Հավանաբար գետնի խորքում ուներ մոտ մեկ մղոն երկարություն: «Նրանք այստեղ սպանեցին մոտ 5000 հայեր, ասաց Տագեսյանը: Նրանց խցկեցին քարայրի խորքը եւ ապա կրակ վառեցին քարայրի մուտքի մոտ: Նրանք ծխից շնչահեղձ եղան: Մինչեւ մահանալը հազում էին»:

Մի քանի վայրկյան միայն պահանջվեց, որպեսզի այս ծշմարտությունը, ժամանակակից վավերաթղթով փաստված, բացահայտվի: Այստեղ, այս ցուրտ ու չոր անապատում, երկրի կեղեւի այս ճեղքը թուրքերը վերածեցին դարի առաջին գազախցի: Մի խոսքով, ցեղասպանության տեխնիկական սկզբունքները կիրառվեցին այստեղ, Սիրիայի անապատի այս անմեղ քարայրում, ժայռի բնական գազախցիկում:

Ժամանակի պետական դեմքերը դատապարտեցին հայկական կոտորածը, ոչ միայն Մորգենթաուն, այլեւ լորդ Պալֆուրը 1916-19 թթ. Անգլիայի արտաքին գործերի քարտուղարը եւ Չերչիլը: Բալֆուրը Հայաստանի մասին այսպես արտահայտվեց՝ «անմեղների արյունով ներծծված մի երկիր»: Հայ ժողովուրդը, ինչպես հետո գրեց Չերչիլը, «Մեծ աշխարհամարտից դուրս եկավ ցիրուցան ու տարագիր, ջարդի, պատերազմի, կորուստների եւ բռնի տեղահանությունների պատճառով սակավացած. պատերազմի կորուստներ եւ բռնի տեղահանություններ՝ հետեւանքներ մի ժողովրդի մեկ երրորդը»:

1915 թ. հայկական ցեղասպանության նվազագույն վիճակագրությունը ցույց է տալիս մեկ միլիոն մարդկային զոհ, որի կեսը՝ կանայք եւ երեխաներ: Մինչեւ 1922 թ. Կովկասում թուրքական ներխուժումներից սպանվեցին մոտ 350 հազար հայեր: 200 հազար վերապրողներ եղեռնից խուսափելու համար ընդունեցին մահմեդական կրոնը: 1918-ին, երբ դաշնակիցները հասան սիրիական անապատները, նրանք գտան եւս կես միլիոն մերկ կամ ցնցոտիներով հայեր, որոնք մեռնում էին խոլերայից կամ տիֆից՝ թուրքական գաղթականների փլատակներում: Անցյալ տարի հայոց կաթողիկոս Գարեգին 2-ը Դեր էլ Զորում օծեց դեղին քարից կառուցված մի եկեղեցի, ի հիշատակ «Հայաստանի սուրբ մարտիրոսների»: Սակայն 10 տարի անց այլեւս չեն լինի ջարդից վերապրողներ, արձանագրելու համար իրենց կենդանի հիշողությունները կամ հուսահատ զգացումները:

«Ջարդից 10 տարի անց ես Մարաղա գնացի, ասաց ծերացած Սրբուհի Փափազյանը: Այն բոլորը, որ ես գտա 1925-ին, միայն ոսկորների եւ գանգերի կույտ էր: Նրանց մարմինները կեր էին դարձել վայրի գազաններին եւ թռչուններին: Ես չգիտեմ, թե դուք ինչո՞ւ եք նեղություն կրել այստեղ գալ եւ գրի առնել ասածներս»:

Պողոս Տագեսյանը եւս նույնն ասաց Մարաղայի բլուրի վրա, այն վայրում, որտեղ գանգերի հանդիպեցինք: Գանգերից մեկը, որ նա պահում էր իր ափի մեջ, փշրվեց: «Մի ասա խղճա նրանց, ասաց նա: Նրանց համար ամեն ինչ վերջացած է: Վերջացած է»:

Այսպես էր Չերչիլը մտածում հայերի մասին. «1914-1918 թթ. պատերազմը, գրում էր նա, թաղեց նրանց փոքու մեջ եւ թերեւս ընդմիշտ: Լոզանի պայմանագրում, որ արձանագրեց Թուրքիայի եւ մեծ տերությունների միջեւ կնքված վերջնական խաղաղությունը, պատմությունը իզուր կփորձի գտնել «Հայաստան» բառը»:

Հիտլերն անշուշտ ըմբռնեց այս ամենի իմաստը: 1939-ի օգոստոսի 22-ին, ձեռնարկելով ավելի սարսափելի ողջակիզություն, նա իր զորավարների առջեւ դրեց պարզ, սարսռեցնող միտք՝ «Այժմ ո՞վ է խոսում հայերի բնաջնջման մասին»: ■

digitised by A.R.A.R.@

Ռաֆսանջանին Իրանի հաջողությունների մասին

Իրանի նախագահ Ալի Աքբար Ռաֆսանջանին զոհաբերության տոնի Խոթոդեի ընթացքում (*Խոթոդեն կրոնական առաջնորդների, ինչպես նաև երկրի եւ բանակի ղեկավարի ելույթն է զլխավոր մզկիթում, նամազից առաջ, ինչպես նաև հասարակական-քաղաքական հարցերի շուրջ, արբաբ եւ տոնական օրերին նաև տարբեր նշանակալից առիթներով. – խմբ.*) նախ անդրադարձավ «Փրկություն ի



հեթանոսաց» արարողության կատարմանը Հաջի ուխտագնացների կողմից (*այդ արարողությունը կատարվեց Իրանի հեղափոխության ներկայիս առաջնորդ Ալաթոլլահ Խամենեիի հրամարակի համաձայն – խմբ.*)։

«*Այս տարի Սաուդյան Արաբիայի կառավարությունը, ի տարբերություն անցյալ տարիների, ասուսան ուխտավորների եւ հաջիների նկատմամբ լավ վերաբերմունք ցուցաբերեց։ Այդ իսկ պատճառով մեր երկրի մասնակիցը եւ լրատվության զանգվածային այլ միջոցները պետք է հավելի նստեն Մեքքայի ուխտագնացության հարցի նրբությունների հետ, եւ առայժմ համագործակցությունն այդ բնագավառում*» (նախագահը նկատի է ունեցել մամուլի որոշ օրգաններում լույս տեսած հաղորդագրությունները, Պարոն Հաշեմի Ռաֆսանջանին ուշադրություն հրավիրեց իսլամական աշխարհի ցավոտ հարցերին մուսուլմանների ջարդը Բոսնիայում եւ Հերցեգովինայում, Պաղեստինի գրավումը, Աֆղանստանը, Քաշմիրի գրավումը, Աֆղանստանի եւ Կովկասում մուսուլմանների տարածքների գրավումը, իսլամական երկրների ղեկավարներից եւ մեծամեծներից պահանջելով, որպեսզի վճռական որոշումներ կայացնեն դրանց վերաբերյալ։

Նախագահը իր երախտագիտությունը հայտնեց Իրանի ժողովրդի միահամուռ ջանքերի դրսեւորման կարգակցությամբ՝ առաջնորդի մահվան երրորդ տարելիցի արարողություններին եւ իսլամական մեջլիսի չորրորդ գումարման ընտրություններին իր ակտիվ մասնակցությունը բերելու համար։ Մասնավորելով երկրում տնտեսական լիարժեք վերակառուցման անհրաժեշտությունը, նա ցավ եւ ափսոսանք հայտնեց մեկ-երկու քաղաքներում տեղի ունեցած դեպքերի եւ սրտաճմլիկ տեսարանների առիթով եւ ասաց. «*Հիմա մենք լիովին կտրել ենք կախվածության թելերը եւ գնում ենք դեպի կատարյալ անկախություն։ Մեր երկիրը մրցակից չունեցող ուժ է դարձել շրջանում։ Այս ամենը չէր կարող դուր գալ հակահեղափոխությանը եւ բնական է, որ նման դեպքերը առաջանան։ Սակայն մենք պետք է ամեն տեսակի չարագործությունների, ինչպես նաեւ հակահեղափոխության եւ առիթից օգտվող տարրերին դիմագրավելուն լիովին պատրաստ լինենք*»։

Նախագահն անդրադառնալով գիտական, տեխնիկական, կրոնական, մշակութային, արվեստի եւ տնտեսական բնագավառների զարգացմանը, նշեց. «*Մեր թշնամիները տեսնելով, որ մեր հացահատիկի արտադրությունը տարեկան երկու միլիոն տոննայով ավելացել է եւ որ 4 միլիոն տոննա բրնձի է դարձել, փոխարեն Իրանն ստիպված է պողպատ արտահանելու շեմին։ Իսլամական հեղափոխության հաջողություններից երկնչում են*»։ Պարոն Ռաֆսանջանին իր ելույթի վերջին մասում երկրի գործադիր մարմինների պատասխանատուներին եւ ղեկավարներին հանձնարարեց, որ խուսափեն հասարակական տարկանների, սուր մարդկանց ձեռքը պատրվակ տալուց։ Նա նշեց, որ կարգադրի ուժերը պարտավոր են չարագործների նկատմամբ վճռական գործել երկրի ցանկացած անկյունում, իսկ դատարանները պատժեն հանցագործներին։ Նախագահը Իրանի Իսլամական հեղափոխության արտաքին թշնամիներին նախազգուշացրեց, որ ուշադրություն դարձնեն Իրանի նկատմամբ տարբեր սադրանքներին դիմադրելու 13-ամյա փորձին եւ կզգան, որ դրանք ավարտվում են պարտությամբ։

Այդ ելույթում մեզ համար ամենից առաջ աչքի է զարնում ցավալի մի փաստ. չնայած մենք շատ ենք խոսել Իրանի Իսլամական Հանրապետության անկողմնակալ միջնորդության, երկու ժողովուրդների դարավոր բարեկամության եւ այն մասին, թե մենք ինչպես ենք հավատացել եւ հուսադրվել այդ միջոցով Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ լուծումը գտնելու առումով, սակայն երկմտանքի առիթ է տալիս Իրանի նախագահի մտահոգությունը մարդասիրական օգնությունների համար բացած միջանցքի կարգակցությամբ, դա գնահատելով որպես «*Կովկասի մուսուլմանների տարածքների զավթում*»։ Եւ դա այն դեպքում, երբ բառամյա կատարյալ շրջափակումից դուրս գալու եւ սովից փրկվելու համար Ղարաբաղի ժողովուրդն այլ ելք չուներ։ Այդ մասին տեղյակ է ողջ աշխարհը։

Ինչ խոսք, պաղեստինցիները հայրենիքի եւ ազատ ինքնորոշման իրավունք ունեն։ Պաղեստինցիներին ուղղարագիորեն պատասխանելով, լսում է, թե միայն մի թուղթիկ հայցքը Ղարաբաղի պատմությանը բավական է, որպեսզի երկու ժողովուրդների պաղեստինցիների եւ Ղարաբաղի ժողովրդի խնդրի ընդհանրությունները։

Հազիվ թե Իրանի նախագահն անտեղյակ լինի հարցի վերաբերյալ երկու կողմերի տեսակետներին։ Հայաստանի սահմանամերձ գոտիների վրա հարձակումները, Ղարաբաղի ժողովրդի զանգվածային տեղահանումները, Ղարաբաղի հայկական գյուղերի ոչնչացումը, Շահումյանի գյուղերի ռմբակոծումը քիմիական զենքի օգտագործման փաստերը ոչ միայն արձանագրած չգտան Իրանի կողմից, դեռ ավելին, այդ մասին Իրանի լրատվական միջոցները հենվում են ադրբեջանական աղբյուրների վրա։

Ղարաբաղի ժողովրդի արդարացի պահանջը համաղաստանում է միջազգային ընդունված չափանիշներին եւ օրենքներին, եւ այդ արդարացի պահանջը իրականացնելու համար բառամյա պայքարի ընթացքում ենթարկվել են անասելի զրկանքների եւ տառապանքների։ Իսկ այժմ ընչահեղձ չլինելու համար բացված պատուհանը բարեկամ երկրի ղեկավարի կողմից որակվում է որպես զավթիչի արարք, դասելով այն Աֆղանստանի, Բոսնիայի եւ Հերցեգովինայի իրադարձությունների շարքին։

Մեր կարծիքով, սա ոչ միայն արդարացի չէ, այլեւ նոպաստում է Թուրքիայի եւ Ադրբեջանի նոր ղեկավարության ծավալապաշտական քաղաքականությանը։ Ադրբեջանի Ժողովրդական ճակատի կանոնադրության մեջ ուղղակիորեն է խոսվում այդ մասին։

Մեղրիի կամրջի բացումը, որ մեզ այդքան խանդավառություն պատճառեց, ծգծգվում է չհիմնավորված պատճառաբանություններով, Թեհրան-Երեւան, Թավրիզ-Երեւան չվերքները նույնպես։ Մինդեռ, Թեհրան-Բաքու եւ Թավրիզ-Բաքու ուղղությամբ ջանքաբանական երկաթուղային թռիչք հաջողությամբ իրագործվում է։ Իհարկե, այս բոլորը պատահականություն համարելը չափազանցություն կլինի։

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Քաղաքացիական պատերազմն անխուսափելի է

Երեկ ԱՊՀ միացյալ զինված ուժերի սպայական ժողովների կոորդինացիոն խորհրդի ընդլայնված նիստում խորհրդի նախագահ առաջին կարգի կապիտան Ալեքսանդր Մոչայկինը հայտարարեց, որ ռուսաստանցի սպաների 76 տոկոսը անխուսափելի կամ հավանական է համարում քաղաքացիական պատերազմը։ Նա նշեց, որ զինված կոնֆլիկտ հրահրելու գործոններից մեկը «զինված ուժերի բաժանումն է»։ Ա. Մոչայկինը վտանգավոր համարեց նաեւ զինծառայողների քաղաքականացումը, որովհետեւ համախմբում են տարբեր քաղաքական կուսակցություններ։ Խորհրդի նախագահի կարծիքով, պայթյունավտանգ իրավիճակը նախկին Միության «թեժ կետերում» նպաստում է սոցիալական լարվածության աճին։ Նա նշեց, որ դեռ չկա զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ծրագիր, այս տարի նախատեսված 120 հազար բնակարաններից նրանք ստացել են 3400-ը։ ■

Թբիլիսին չի վերահսկում

Վրաստանի Պետխորհրդի անդամ Գեորգի Խաչիդավան որպես սպանք գնահատեց Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասբուլատովի հայտարարությունը Հարավային Օսիայի վերաբերյալ։ Երեկ Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում նա նշեց, որ «Խասբուլատովը այդպիսի հայտարարություն անելու իրավունք չուներ։ Հարավային Օսիան անկախ Վրաստանի տարածքն է»։ Նա կարծիք հայտնեց, որ Ռուսաստանի խորհրդարանի ղեկավարի խոսքերը կարող են խախտել բանակցությունների գործընթացը Վրաստանի եւ Հյուսիսային Օսիայի ղեկավարությունների միջեւ։ Նա նշեց, որ Թբիլիսին «բոլոր հնարավոր միջոցներն է ձեռնարկում խաղաղ ճանապարհով կոնֆլիկտը կարգավորելու համար»։ Ընդ որում, Խաչիդավան ընդունեց, որ Վրաստանի իշխանությունները դեռ ի վիճակի չեն վերահսկել Ցխինվալի մատույցներում գտնվող բոլոր զինված խմբավորումները։ ■

Օզալ–Դեմիրել մեղադրանքները ուշադրության կենտրոնում

1983 թվականի նոյեմբերից մինչեւ 1991 թվականի հոկտեմբերը իշխանությունը Թուրքիայում պատկանում էր «Մայր Հայրենիք» կուսակցությանը՝ Թուրգութ Օզալի գլխավորությամբ։ 1989 թ. նոյեմբերին նա ընտրվում է հանրապետության նախագահ, իսկ կուսակցությունը եւ կառավարությունը գլխավորում է Յըլդըրըմ Աքբուլուտը։ 1991 թ. հունիսին տեղի են ունենում «Մայր Հայրենիք» կուսակցության պարագլխի ընտրություններ, որը շահում է Մեսութ Յըլմազը։ Նա էլ գլխավորում է կառավարությունը մինչեւ նույն թվականի հոկտեմբերը։ Այսպիսով, 1989–1991 թթ. ընթացքում Թուրքիայի հանրապետության նախագահի եւ վարչապետի միջեւ գոյություն ուներ փոխադարձ ըմբռնում։ 1991 թ. հոկտեմբերի մեջլիսի նախաժամկետ ընտրությունները շահում են գլխավորապես «Ճշմարիտ ուղի» եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, որոնց պարագլուխները Սուլեյման Դեմիրելը (վարչապետ) եւ Էրդալ Ինյոնյուն (վարչապետի տեղակալ եւ պետական նախարար) կազմում են խառը կառավարություն։ Իսկ հանրապետության նախագահը, փոխանակ, սահմանադրության համաձայն, անկողմնակալություն պահպանի միջկուսակցական պայքարում, ամեն կերպ պաշտպանում է ընդդիմադիր «Մայր Հայրենիք» կուսակցությանը։ Դեմիրել-Ինյոնյու կառավարության կազմվելուց հետո անցած ժամանակաշրջանում հանրապետության նախագահը հաճախ դիմագրավում է կառավարության միջոցառումները երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության բնագավառում, որի համար էլ մեղադրվում է երկիրը միանձնյա կառավարելու մեջ։ Վերջերս հանրապետության նախագահ [illegible] կառավարության [illegible] արմել։ [illegible] գործարքը պատ[illegible]

«Միլլիյեթ» եւ «Հյուրրիյեթ» թերթերը ս.թ. հունիսի 6–9 համարներում տպագրել են հոդվածներ եւ հարցազրույցներ Օզալի եւ Դեմիրելի տարածայնությունների մասին։ Հրապարակային վեճը նրանց միջեւ սկսվեց հունիսի 5-ին Իզմիրում բացված 3-րդ տնտեսական խորհրդակցության շրջանակներում, որին մասնակցում էին նաեւ արտասահմանյան գործարար մարդիկ եւ բարձրաստիճան հյուրեր։ Օզալն իր զեկուցման մեջ խոսելով Թուրքիայի զարգացման հեռանկարային հիմնական նպատակների մասին, նշեց, որ առաջիկա 10 տարիների ընթացքում Թուրքիան կարող է մրցել աշխարհի զարգացած 10–15 երկրների շարքը, որի համար անհրաժեշտ կլինի դրամի արժեզրկումը իջեցնել տարեկան 10 տոկոսով եւ ունենալ 7–8 տոկոս արտադրության աճ։ «*Եթե լուրջ սխալներ թույլ չտանք, առա 21-րդ դարը կլինի թուրքերի եւ Թուրքիայի դարը*», մատնանշել է Օզալը։ Դրան ի պատասխան Դեմիրելը ասել է. «*Այդ նպատակներին շատ դժվարությամբ կարելի է հասնել։ Երբ գյուղացիությունը կազմում է երկրի ազգաբնակչության 45–50 տոկոսը, այդ երկիրը երբեք հարուստ լինել չի կարող*»։ Այնուհետեւ Դեմիրելը շարունակել է «*Եթե մենք ամեն տարի 1 մլն. կվտ.ժ. ավելի էլեկտրականություն արտադրող ձեռնարկություն չկառուցենք, առա 1996 թ. կմնանք առանց էլեկտրականության։ Արդյունաբերական զարգացումը կանգ է առել։ Ներդրումներ ավելանում [illegible] Թուրքիային տարեկան առնվազն 5 տոկոս աճ է անհրաժեշտ։ Ազատ շուկային այո՝, բայց Թուրքիան դեռեւս ազատ տնտեսության չի անցել։ Ճիշտ է, սաստիկայում մեծ հնարավորություններ կան, բայց կան նաեւ դժվարություններ։ Մենք գտնվում ենք անցման ժամանակաշրջանում*»։

Բայց Օզալը Իզմիրում, մամուլի աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում, իրեն թույլ է տվել մի շարք վիրավորական «*կառավարությունը մայիսին կընկնի*», «*կառավարությունը սեպտեմբերին կտապալվի*» եւ այլ արտահայտություններ, որից Դեմիրելը ավելի է ջղայնացել։ Վերջինիս ասելով, «*այս խոսքերը անկողմնակալ նախագահին չեն վայելում*»։ Արդեն Անկարայում, այցելելով Օզալին, մեկ ժամից ավելի տեւած զրույցի ընթացքում Դեմիրելը ասել է, «*ինքը անհանգստացած է կառավարության հասցեին արված ցավ պատճառող հայտարարությունների կապակցությամբ*»։ «*Երբ նախագահը ասելու բան ունի, շարունակել է Դեմիրելը, առա այդ մասին թող ասի հանգիստ տոնով*»։ «*Վերջիվերջո, հոկտեմբերի 20-ի ընտրություններում հիսուն տոկոսի մոտ ձայն ստացած խառը կառավարությունը է, բերքատվությունը նվազում։ Եթե մենք ուզում դարձնենք մասնավոր, առա Թուրքիայում ով է սովորելու։ Ներքին եւ արտաքին պարտքերը տանում են բյուջեի մեծ մասը։ Վարչական աղարատը կրճատենք, բայց 1 մլն ծառայող չենք կարող կրճատել։ 100 տրիլիոն լիրայից ավելի գումարը ռոճիկին չի բավականացնում*»։

Մեր կարծիքով, Օզալը նման հայտարարություններով ցանկանում էր վարկաբեկել կառավարական կոալիցիայի կուսակցություններին, հունիսի 7-ի տեղական ընտրությունների ընթացքում։ Ի դեպ նշենք, որ այս ընտրությունների ընթացքում Օզալի «Մայր Հայրենիք» ընդդիմադիր կուսակցությունը պարտություն է կրում, ստանալով ձայների ընդամենը 18, իսկ Դեմիրելի եւ Ինյոնյուի կառավարող կուսակցությունները համապատասխանաբար ձայների 35 եւ 23 տոկոսները։ Հանրագումարի բերելով տեղական ընտրությունների արդյունքները Դեմիրելը եւս իր հերթին հայտարարեց, թե «*ընտրողները «Մայր Հայրենիք» կուսակցությանը հրաժարական բակոց են տվել*»։ Դեմիրելի ասելով, Օզալին նախագահի պաշտոնից հեռացնելու համար մեջլիսի 300 պատգամավորներ պատրաստ են քվեարկել սահմանադրության փոփոխման օգտին, որպեսզի հնարավոր լինի Օզալին սահմանադրական կարգով պաշտոնից հեռացնել (իմպիչմենտի տարատեսակ)։ Ըստ նրա տվյալների, այդ խմբի մեջ մտնում են նույնիսկ «Մայր Հայրենիք» կուսակցությունից մեջլիսի մի շարք պատգամավորներ։

«Հյուրրիյեթ»-ի հաղորդման համաձայն, Դեմիրելի համբերության բաժակը լցվել է։ «*Ես մինչեւ այսօր համբերեցի, բայց մեջլիսը անհամբեր է, դրսում անհամբեր են։ Երկուերեք ամիս «տապալիր» ասող պատգամավորներից ճնշում է գալիս, ես հակառակվում եմ։ Նույնիսկ «Մայր Հայրենիք»-ի ներսում մի խումբ էլ այդ նույնն է ուզում։ Երբ ես իշխանության գլուխ եկա, իշխանության գագաթում վեճ չսկսելու ձգտում ցուցաբերեցի։ Նա էլ խոստում տվեց դուրս չգալ սահմանադրության շրջանակներից։ Խոսքը դրժեց։ Կուլ տվինք, ձայն չհանեցինք։ Թուրգութ Բեյը ժողովրդի ձայների մեծամասնությամբ նախագահ չի ընտրվել, այդ իսկ պատճառով այժմյան մեջլիսին հակառակ է։ Եթե լուցկին կոցնես, մեջլիսը կվառի։ Ժողովրդի 40 տոկոսը ասում է, «Վերջացրեք այդ գործը», այսինքն ասում է տապալեք։ 30 տոկոսը՝ Զանկայային (նախագահի պատասխանատուները. – խմբ.) ձեռ չտաք»։ Մյուս 30 տոկոսն էլ «այդ գործը թողեք ժամանակին, ասում է»։*

Պետական նախարար Զավիդ Չաղլարը եւս ասում է. «*Նույնիսկ հայրիկի (խոսքը Դեմիրելի մասին է, որին Թուրքիայում անվանում են Բաբա – խմբ.) համբերությունը մեզ չի կարող զսպել*», նշելով, որ Օզալը հանրապետության նախագահ է ընտրվել ժողովրդի ձայնի 21.5 տոկոսով. «*Նա մեզ ճնշաղատում է ընդդիմության նման։ Վարչապետը մեզ համբերել է առաջարկում։ Բայց այսքան բանից հետո մեզ չի կարող զսպել նույնիսկ Դեմիրելի համբերությունը։ Մենք հանրապետության պատասխանատու նախագահ ենք փնտրում։ Հանրապետության այս նախագահը իմ նախագահը չէ։ Ես այս պետության մեկ նախարարը լինելով, հանրապետության պատասխանատու նախագահ եմ փնտրում*», վերջացրել է պետական նախարարը։

Այժմ Թուրքիայի քաղաքական շրջանակներում քննարկվում է հանրապետության նախագահի ընտրությունների օրենքի հնարավոր փոփոխությունը։

Ր. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մովսես Խորենացուն նվիրված գիտաժողով Նյու Յորքում

1992 թվականի մայիսի 22-ին և 23-ին Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Արևելյան թեմի Առաջնորդարանի հանդիսասրահում տեղի ունեցավ Մովսես Խորենացու 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով: Գիտաժողովը կազմակերպվել էր Առաջնորդարանին առընթեր գործող «Գրիգոր եւ Կլարա Զոհրաբ» տեղեկատվական կենտրոնի կողմից, մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի եւ Կոլումբիայի համալսարանի Գեւորգ Ավետիսյան հայոց պատմության եւ քաղաքակրթության ամբիոնի: Գիտաժողովը կոչվում էր *«Մովսես Խորենացին եւ միջնադարյան հայ պատմագրությունը»*՝ ընդգծելով Խորենացուն նվիրված Երեւանյան գիտաժողովի շրջանակները: Մասնակիցների կազմը բազմազգ էր եւ ընդգրկում էր Ամերիկան, Եւրոպան, Ռուսաստանն ու Հայաստանը: Հայաստանից գիտաժողովին հրավիրվել էին հայրենի 10 գիտնականներ՝ ԳԱ Արեւելագիտության ինստիտուտից ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի եւ Մատենադարանից՝ բդեշխ Սեն Արեւշատյանի գլխավորությամբ: Հայկական պատվիրակության զեկուցումները վերաբերում էին Խորենացու ժամանակին, շրջան զրի առկայության խնդրին, նրա պատմության եւ հարեւան ժողովուրդների պատմության առնչություններին, ազգային ինքնիշխանության եւ պետականության գաղափարախոսությանը, առասպելականությանը, նրա պատմության ազդեցությանը հետագա հայ պատմագրության վրա եւ այլն:

Շատ ներկայացուցչական էր այլ երկրներից հայ գիտնականների եւ մանավանդ օտար հայագետների կազմը: Զեկուցումով հանդես եկան Սանկտ-Պետերբուրգից Անահիտ Փերիխանյանը, Միացյալ Նահանգներից Աբրահամ Տերյանը, Լեւոն Ավոյանը, Ռ. Ասլեանը: Ուշագրավ զեկուցումներ կարդացին Մ. Վան Էսբրոքը, Պ. Քաթին, Ռ. Թոմսընը, Մ. Եվարցը, Ջ. Ռասլը, Նինա Գարսոյանը եւ Ժ. Պիեռ Մահեն:

Զեկուցումների մակարդակը շատ բարձր էր եւ մթնոլորտը խիստ գիտական: Արտահայտվեցին հակադիր կարծիքներ, երբեմն սուր, բայց վիճահարույց խնդիրները չդարձան առաջնային, որովհետեւ ամենակարեւորն էր վեր հանել պատմահոր կերպարը: Գրեթե անբեր էր գիտաժողովի կազմակերպական կողմը, դրբախտաբար սակայն, մանավանդ Հայաստանից ներկայացած հսկայական գիտական միտքը չօգտագործվեց արտաքո գիտաժողովի հայ հասարակության համար: Այս իմաստով մխիթարական էր Լոս Անջելեսում խմբին ասողջական հյուրասիրություն ցույց տված անվանի պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի ջանքը մի քանի հանդիպումներ կազմակերպելու եւ հայ համայնքի հետ զրույցներ աղահովելու համար: ■

Յուրի Պետրոսյանը ցուցադրում է իր քանդակները

Հնայած Յուրի Պետրոսյանը հայտնի անուն է մեր կերպարվեստում, սակայն նրա անհատական առաջին ցուցահանդեսը միայն վերջերս բացվեց Երեւանի նկարչի տանը: Ճիշտ է, արվեստագետը մինչ այդ արդեն երկու անհատական ցուցահանդեսներ ունեցել է, սակայն դրանք կազմակերպվել են դրսում՝ Մոսկվայում (1988 թ.), աղա Ռիգայում (1990 թ.): Վերջապես մեզ մոտ էլ մեկնեղված են տեսնում նրա ստեղծագործական տարբեր շրջանների պատկանող աշխատանքները:

Արդեն քառորդ դար արվեստի այս համեստ մշակը հետեւողականորեն խորացնում է իր հաջողությունները նոր ձեւերի յուրացման ասպարեզում, զարգացնում իր նախասիրած թեմաները: Դրանք քանդակային սգերգերն են («Ռեքվիեմ») եւ «Ողբերի» շարքը: Այդ շարքերով հեղինակը ամենեին էլ նոպատակ չունի լալկան կամ հուսահատական տրամադրություններ առաջացնել: Հակառակը, դրանք ուժեղ մարդանհատի, ճակատագրի ծանր հարվածներ կրած ժողովրդի ոգու ամրության դրսեւորումներ են, աղագայի հանդեպ հավատ ներշնչող կերպավորումներ:

Քանդակագործության ժանրային առանձնահատկությունները եւ ընձեռած հնարավորությունները սովորաբար ավելի սահմանափակ են արտահայտելու շրջապատող իրականության բազմազան երեւույթները: Մինչդեռ դա կարծես չի զգացվում Յուրի Պետրոսյանի պարագայում: Նրան հաջողությամբ «տրվում են» այնպիսի «ոչ քանդակային» թեմաներ, ինչպիսիք են «Գիշերը», «Անուրջները», «Մտորումները» եւ այլն:

Քանդակագործի սիրած նյութը իրականն է: Ինչպես նա է ասում, *«դա ձեւաստեղծման ավելի լայն հնարավորություններ է տալիս, քան է տալիս ասելիքդ ավելի լավ արտահայտես»*: Այդ նյութն էլ հավանաբար թելադրում է մշակվածության չափը՝ մի տեսակ ոչ ավարտուն, որը նախաստեղծ ունչ է հաղորդում քանդակագործի ստեղծած կերպարներին: Նա նախընտրում է կերպավորման ավելի պայմանական միջոցները: Մարդկային թեկթեկուն ֆիգուրների, իրանի ընդհատվող մասերի հետաքրքիր զուգորդումների միջոցով հեղինակը կարողանում է յուրովի տեղ հատացնել իր մտադրությունը: 1991-ին ստեղծած «Ռեքվիեմն», օրինակ, պատկերում է երկսայտված մարմնով մարդու ֆիգուր, որ ավելի շատ երկսայտված հոգու արտահայտություն է:



«1915 թիվ», հրակավ, 1984

Յու. Պետրոսյանը նաեւ մոնումենտալ աշխատանքների հեղինակ է: Ուշագրավ են ճարտարապետական շինությունների հետ քանդակային համադրումների նրա փորձերը (մայրաքաղաքի «Մոսկվա» կինոթատրոնի ճակատի բարձրաքանդակները, Գյումրիի դրամատիկական թատրոնի շքամուտքի հարթաքանդակները եւ այլն):

Ցուցահանդեսում տեղ են գտել նաեւ Յու. Պետրոսյանի հեղինակած դեկորատիվ շարքերը եւ հատկապես վերջին շրջանում ստեղծած գրաֆիկական թերթերը՝ «Թատրոն», «Պատուհանի մոտ», «Նոներով աղջիկները», «Հրեշակներ» եւ այլն:

Վերջիններս առանձնանում են գունային մեղմ լուծումներով եւ նուրբ ճաշակով:

Ընդհանրապես ճաշակն առկա է թե՛ առանձին ստեղծագործություններում եւ թե՛ որ պակաս կարեւոր չէ, դրանց դասավորության եւ ցուցադրման արվեստի մեջ: Մի հանգամանք, որ երբեմն մոռացվում է մեզ մոտ գեղարվեստի ցուցահանդեսներ կազմակերպելիս:

ԼԵՎՈՆ ԼԱՇԿՅԱՆ

Ես ուզում եմ, որ աշխարհում ամեն ինչ իր հունով գնա

«Արամազդ» հրատարակչությունն այս տարի լույս է ընծայել Լիլիթ Սարոյանի «Փշված անուրջ» բանաստեղծությունների գիրքը: Ընդամենը 22 բանաստեղծություն, գունեղ ու անողոքաբար երեւակայությամբ գրված, աչքիդ առաջ բացում են մանկական աշխարհի հայտնի ու թաքուն անկյունները, հետաքրքրությունները, աշխարհընկալման երբեմն անբերանները: Լիլիթն ընդամենը 9 տարեկան էր, երբ գրի գնաց երկրաշարժին: Այսօր կլրանար նրա 13 տարին... Գրքույկի տպագրությունը հովանավորել են Գրական հիմնադրամը եւ Գեղարվեստական խորհուրդը՝ Երեւանի ոսկերչական գործարանի եւ Պոլիգրաֆիական արտադրական միավորման աշխատակիցների գործուն աջակցությամբ: Գրքույկը ձեւավորել է բանաստեղծ եւ նկարիչ Գարուշ Հարությունը: Այս ժողովածուն ընթերցողին տրի կսկիծ եւ միաժամանակ բարություն կներշնչի: Հավերժ հիշատակ Լիլիթին եւ երկրաշարժի մյուս փոքրիկ նահատակներին: ■

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՀ բարձրագույն խմբի առաջին առաջնություն 13-րդ տուր

1-ին ենթախումբ

«Մալաթիա» - ՀՄԸՄ՝ 2-2, «Նաիրի» - «Ախթամար»՝ 4:1, «Արարատ» - «Լոռի»՝ 4:0, «Նիգ» - «Բանանց»՝ 1:2, «Սյունիք» - «ՀՄՄ-ՖԻՄՍ՝ 2:2, «Զորավան» - «Ալաշկերտ»՝ 1:0

2-րդ ենթախումբ

«Կոտայք» - «Վան»՝ 4:1, «Կանազ» - «Քասախ»՝ 0:0, «Կիլիկիա» - «Իմոյլս»՝ 3:2, «Արաքս» - «Պահածոյագործ»՝ 0:4:

Առաջնության աղյուսակները հունիսի 18-ի դրությամբ

1-ին ենթախումբ

	խ	հ	ո	պ	գ	մ
1. Արարատ	13	10	2	1	59-8	22
2. Բանանց	12	9	3	0	32-5	21
3. ՀՄԸՄ	12	7	4	1	28-13	18
4. Սյունիք	12	5	4	3	22-20	14
5. Մալաթիա	13	5	4	4	21-21	14
6. ՀՄՄ-ՖԻՄՍ	13	5	4	4	16-16	14
7. Նաիրի	13	5	3	5	14-13	13
8. Զորավան	13	5	0	8	18-22	10
9. Լոռի	13	3	3	7	17-29	9
10 Ախթամար	13	3	1	9	8-43	7
11. Ալաշկերտ	12	2	2	8	17-36	6
12. Նիգ	13	2	0	11	10-36	4

2-րդ ենթախումբ

	խ	հ	ո	պ	գ	մ
1. Կիլիկիա	12	9	1	2	40-12	19
2. Կոտայք	13	8	3	2	34-11	19
3. Շիրակ	11	8	2	1	28-4	18
4. Վան	13	8	2	3	30-13	18
5. Ջվարթնոց	12	5	6	1	24-14	16
6. Կանազ	13	6	2	5	23-18	14
7. Քասախ	12	4	4	4	8-12	12
8. Շենգավիթ	12	4	3	5	15-20	11
9. Պահած.	12	2	3	7	13-24	7
10. Իմոյլս	13	3	0	10	17-30	6
11. Արաքս	13	1	3	9	10-43	5
12. Դեբեդ	12	1	1	10	13-54	3

Հայաստանի Հանրապետության առաջին գավաթակիր Աբովյանի «Բանանց»-ը նաեւ ինքնաթիռ ռեկորդի հեղինակ դարձավ: Այս հետաքրքիր թիմը 12 տուր անընդմեջ պարտություն չի կրել: Նրա մրցավազքը «Արարատ»-ի հետ գայթակղիչ է:

Նկատվում է, որ գնալով թիմերն ավելի կազմակերպվածություն են դրսեւորում, իսկ մարզիչներից շատերն էլ երեւում է գիտակցել են իրենց վրա դրված պատասխանատվության ծանր բեռը: Վստահություն են ծնում նաեւ երիտասարդ ու անփորձ մրցավարները: ■

Սեֆս եւ քաղաքականություն

Ջեֆերսոնից եւ Լենինից մինչեւ Բրժնեւ ու Քլինտոն սկանդալները մնում են պետական գործիչների կյանքի մի մասը, գտնում է ամերիկյան լրագրող Թոմաս Ֆերարոն:

Սեֆսը, կապված քաղաքականության հետ ամերիկյան ավանդույթ է, որի տարեգրության մեջ գրանցված են այնպիսի հարգված մարդիկ, ինչպիսիք են Թոմաս Ջեֆերսոնը, Ֆրանկլին Ռուզվելտը եւ Ջոն Քենեդին: Սակայն, ի տարբերություն այն բանի, թե առաջներում ինչպես էին վերաբերում նման բաներին, այժմյան ամերիկյան թերթերը փնտրում են ամենաբարձրասիճան եւ ամենահրաշակավոր մարդկանց, իսկ հասարակայնությունը, ըստ երեւույթին, ավելի է ձգտում քաղաքականությունից կտրել նրանց, ովքեր բացահայտվել են ամուսնական անհավատարմության մեջ:

ԱՄՆ-ը, իհարկե, միայնակ չէ, այլ երկրների ղեկավարներն էլ անմեղ չեն: Ասում են, Լենինը սիրուհի ուներ: Լուրեր են տարածվում, թե Լեոնիդ Բրժնեւը հրաժարվում էր թեթեւ վարքի տեր կանանցով: Այնուամենայնիվ, ոչ ոք չէր ծգտում այդ եւ ուրիշ ղեկավարների սիրո արկածները դարձնել հասարակայնության սեփականությունը: Սակայն ամերիկացիներին կարծես ծգում է նման պատմությունների բացահայտման ցանկությունը, եւ քաղաքագետները այդ հնարավորությունը հաճախ հանրությանը տալիս են:

ԱՄՆ-ում 1987 թվականին Հերի Հարթի նախընտրական արշավը ձախողվեց, երբ լրագրողները պարզեցին, որ Կոլորադոյից այդ սենատորը կապված էր գեղեցկության նախկին թագուհու հետ: Այս տարի փայլուն կերպով սկսված նախագահական բազկաթոռի համար Բիլ Քլինտոնի արշավն սկսեց խափանվել, երբ գիշերային ակումբի մի նախկին երգչուհի հայտարարեց, թե ինը 12 տարի եղել է թեկնածուի սիրուհին: Սակայն, չնայած դրան, Քլինտոնը շարունակում է նախընտրական պայքարը:

«Նախկինում քաղաքագետը կարող էր զուգակցել հասարակական եւ անձնական կյանքը, բայց հիմա դա անհնար է», գտնում է Վիրջինիայի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Հարի Սաբատոն, որը վերջերս հրատարակել է մի գիրք «Ինչպես ագրեսիվ լրագրությունը փոխեց քաղաքական կյանքը Ամերիկայում» խորագրով: Հեղինակը նաեւ հարց է տալիս, արդյոք ԱՊՀ-ի ազատ մամուլը այժմ չի՞ սկսի հետաքրքրվել Համագործակցության ղեկավարների կյանքով: Խորհրդային թերթերը չփորձեցին մերկացնել Լենինի եւ Բրժնեւի սիրային կապերը, սակայն, Սաբատոյի կարծիքով, «Խորհրդային Միության շատ բռնապետեր եւ վարչապետներ, հավանական է, ունեին զանգվածային արտաքսական կապեր եւ զբաղվում էին հարբեցողությամբ»: Սաբատոն վստահ է, որ ԱՊՀ-ի մամուլն իր հիմնական ուշադրությունը առայժմ հատկացնում է տնտեսական խնդիրներին: «Բայց հենց որ կյանքը կարգավորվի, ռուսաստանյան ղեկավարներն ստիպված կլինեն շատ զգույշ լինել»:

Ամերիկայում նույնիսկ սկանդալի ակնարկը բերում է հասարակայնության հուզումների: Ամերիկյան CBS հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Քլինտոնը բացառեց իր սիրային կապերը իրեն մեղադրող կնոջ հետ, բայց միեւնույն ժամանակ խուսափեց այն հարցի պատասխանից, թե արդյոք երբեւիցե դավաճանե՞լ է իր կնոջը: Այդ հարցազրույցից հետո Քլինտոնի հեղինակությունն զգալիորեն ընկավ:

Ամերիկյան այլ քաղաքագետներին հաջողվում էր խուսափել «սխալների» նկատմամբ պատասխանատվությունից, որոնք նրանք իրոք կատարել էին, կամ որոնցում նրանց անարդացույց մեղադրել էին:

Ասում են, որ ԱՄՆ-ի «հիմնադիր հայրերից» մեկը Թոմաս Ջեֆերսոնը սիրաբանություն էր ունեցել մի սրկուհու հետ: Չնայած նրան, որ թերթերը հաղորդեցին այդ լուրի մասին, Ջեֆերսոնը հանդես եկավ հերքումով: ԱՄՆ-ի նախագահ նրան ընտրեցին երկու անգամ 1800 եւ 1804 թվականներին:

Պնդում են, որ նախագահ Գրովեր Քլիվլենդը արտամուսնական կապից որդի է ունեցել: 1884 թվականի նախընտրական արշավի ժամանակ Քլիվլենդի հակառակորդները ծաղրական վանկարկում էին. «Մայրիկ, մայրիկ, ո՞ւր է հայրիկը»: Հետո, երբ ընտրեցին, նրա կողմնակիցները պատասխանեցին. «Սոիտակ տանն է, լո՞ւմ ես, այ միամիտ»:

Հայտնի է, որ նախագահ Ուորեն Հարդինգը սիրային կապեր ուներ իրենից ավելի երիտասարդ մի կնոջ հետ, իսկ Ռուզվելտը կապված էր սեփական կնոջ քարտուղարուհու հետ: Երկարդ համաշխարհային պատերազմի ժամանակ գեներալ Դուայթ Էյզենհաուերը մտերիմ կապերի մեջ էր մի կնոջ հետ, որն իր մոտ ծառայում էր որպես վարորդ: Նախագահ նրան ընտրեցին 1952 թվականին: Նախագահներ Քենեդիի եւ Լինդոն Ջոնսոնի մասին հիմա ասում են, որ նրանք նույնպես հաճախ դավաճանում էին իրենց կանանց: Սակայն, քանի դեռ նրանք նախագահ էին, դա գաղտնի էր պահվում:

Ամերիկյան լրատվական զանգվածային միջոցները երկար ժամանակ խուսափում էին ենթել քաղաքական գործիչների անձնական կապերը, սակայն այդ չգրված կանոնները խախտվեցին 1972 թվականին, Ուոթրգեյթյան սկանդալից հետո, որի մեջ խառնված էր նախագահ Նիքսոնը: Նախագահ Ջոնսոնի ժամանակ իրենց դերը խաղացին պատերազմը վիետնամում, կանանց իրավունքների համար շարժման վերելքը եւ լրագրությունում հարձակողականության աճը:

Ամերիկյան քաղաքականության քննադատները գտնում են, որ լրատվության զանգվածային միջոցները բավական առաջ գնացին: Նրանց կարծիքով, լրագրողներին անհրաժեշտ է ավելի շատ ուշադրություն դարձնել «իրոք կարեւոր հարցերի վրա, որոնք վերաբերվում են առողջապահությանը, կրթությանը եւ սոցիալական պաշտպանվածությանը, եւ ավելի քիչ զբաղվել թեկնածուների անձնական կյանքով»: Այդ ենթադատները պնդում են նաեւ, որ «նախահարձակ լրագրությունը» շատ հավակնորդների թույլ չի տալիս զբաղեցնել ընտրվի պաշտոնը, որոնք այդ տեղում կարող են ավելի շատ օգուտ բերել: Իսկ լրագրողները պատասխանում են, որ եթե քաղաքական գործիչը խաբում է իր կնոջը, նա կարող է խաբել նաեւ ամբողջ ժողովրդին: Բացի դրանից, նրանք մեջբերում են ամերիկյան լրագրողների ավանդական նշանաբանը. «Ժողովուրդը իրավունք ունի իմանալ ճշմարտությունը»:

Ինչպես գտնում է Վաշինգտոնում Ջորջթաունի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Սթիվըն Ուեյնը, «արդարացի է նախագահներից պահանջել վարքագծի ավելի բարձր նորմեր, քան ուրիշներից, քանի որ նրանց բազմաթիվ պարտականությունների մեջ մտնում է նաեւ բարոյական ղեկավարությունը»:

Ըստ օտար մամուլի նյութերի

digitised by A.R.A.R.@

Էլչիբեյ. «Ռուսաստանի եւ Ուկրաինայի հետ հարաբերությունները առաջնային են Ադրբեջանի համար»

Հունիսի 16-ին Ադրբեջանի խորհրդարանում տեղի ունեցավ նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի երդման դաշտանական արարողությունը: Ելույթ ունենալով դաշտգամավորների, օտարերկրյա դեսպանների եւ այլ հյուրերի առջեւ, նա նշեց, որ Ադրբեջանի ազգային մենակությունը հիմնված է երեք հիմնական սկզբունքների վրա. ուժեղ իշխանություն, հզոր միասնություն եւ ազգային համաձայնություն: Այդ սկզբունքները պետք է աղյուսվեն օրենքի առաջնությունը եւ դայմաններ ստեղծեն հանրապետության բոլոր քաղաքացիների անձնական դահանջները բավարարելու համար: *«Ադրբեջանը չի միանա որեւէ քաղաքական հարաբերություններ հաստատի նախկին ԽՍՀՄ բոլոր դետությունների հետ»*, հայտարարեց Ա. Էլչիբեյը: Ընդ որում, նա հատուկ նշեց, որ *«Ռուսաստանի եւ Ուկրաինայի հետ հարաբերությունները առաջնային են Ադրբեջանի համար»*:

Խոսելով Ղարաբաղում տեղի ունեցող դատերազմի մասին, նախագահն ընդգծեց, որ Ադրբեջանը կողմ է կարգավորելու այդ հիմնահարցը ԵԱՀԽ-ի եւ ՄԱԿ-ի սկզբունքների շրջանակներում: *«Դրա հետ մեկտեղ, Ադրբեջանը որոշես անկախ դետություն կունենա ուժեղ բանակ եւ ինքնուրույն արտաքին քաղաքականություն»*, նշեց նախագահը: Խոսելով շրջանային խնդիրների մասին, Ա. Էլչիբեյն ասաց, որ կովկասյան ժողովուրդների առդագան շատ բանով կախված է նրանց միասնությունից եւ Ադրբեջանը դատրաստ է անհրաժեշտ ջանքեր գործադրել «Կովկասյան տուն» ստեղծելու գործում: Ընդ որում, նա նշեց, որ *«Կովկասում խաղաղություն հաստատելու բոլոր փորձերը անհաջողության կմատնվեն, եթե հիմնված չլինեն սահմանների անխախտելիության սկզբունքի վրա»*:

Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Իսա Ղամբարովը գտնում է, որ փոխադարձ դատության մերձեցումը Ռուսաստանի հետ կարող է «որոշ չափով» խախտել ուժերի հավասարակշիռը շրջանում: Հունիսի 15-ին Բաքվում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ դատասխանելով Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունների հեռանկարների մասին «ԻՖ»-ի հարցին՝ Ի. Ղամբարովը նշեց, որ Մոսկվայի հետ փոխշահավետ կապերի զարգացման հետ մեկտեղ, Բաքուն մտադիր է ակտիվ քաղաքականություն անցկացնել համաշխարհային հանրության սահմաններում եւ բարձրացնել իր դերը ԵԱՀԽ-ում եւ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդում:

Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական կոնֆլիկտին՝ Ի. Ղամբարովը հայտարարեց, որ վերջին ժամանակներս Ադրբեջանին սդառնում է մասնատման վտանգը: Նրա խոսքերով, հանրապետության ղեկավարությունը չի կարող հաշտվել դրա հետ եւ ձեռնարկում է համադատասխան «նախազգուշական միջոցներ»: Ի դեդ, Ղամբարովը նշեց, որ մոտ ժամանակներս հայերը նախատեսում են գրավել Աղդամը, Ֆիզուլին, Թար-Թարը, Ղազախը, ուստի *«Ղարաբաղում ամբողջ երկայնքով տեղակայված մարտերը կանխիչ բնույթ են կրում»*: Ադրբեջանի խորհրդարանի ղեկավարը մեղադրեց հայկական կողմին զերիների եւ դատանդերների նկատմամբ դաժան վերաբերմունքի մեջ: Իսկ ադրբեջանական կողմը մարդասիրական վերաբերմունք է դրսեւորում դահդանելով միջազգային համաձայնագրերը: Ամենակարճ ժամանակում դատանդերին ազատ են արձակում, ուստի ներկայումս ադրբեջանական կողմը հայ զերիներ չունի (մինչդեռ, բոլորիս է հայտնի, թե ինչու, ադրբեջանցիները դարզապես ոչնչացնում են նրանց տեղում):

■

ԱՄՆ-ը դատրաստ է օգնել Ադրբեջանին

Նախագահներ Ջորջ Բուշը եւ Բորիս Ելցինը ընդհանրապես հղեցին Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյին այդ դաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Ջորջ Բուշը հեռագրում նշեց, որ նախագահական ընտրությունները զգալի դեր են խաղացել Ադրբեջանում ժողովրդավարության զարգացման համար եւ հայտարարեց, որ ԱՄՆ-ը դատրաստ է բազմակողմանի օգնություն ցուցաբերել հանրապետությանը տնտեսական հարաբերություններին անցնելու գործում: Երկու նախագահները հույս հայտնեցին, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կլուծվի խաղաղ ճանապարհով:

■

Լուրերի Դոմ

Դոլլարի կուրսն աճում է

Հունիսի 16-ին կայացավ Մոսկվայի միջբանկային արժույթային բորսայի սակարկությունը: ԱՄՆ-ի դոլլարի կուրսը կազմեց 118,5 ռուբլի 1 դոլլարի դիմաց:

Վաճառվեց 21 միլիոն 240 հազար դոլլար: Հունիսի 11-ի սակարկության ժամանակ գրանցվել էր 112,3 ռուբլի 1 դոլլարի դիմաց կուրսը: Ինչդես դարզաբանեց բորսայի արժույթային տուկայի բաժնի դետ եւ գենի Ա.Ֆանասեւը, արժույթի դահանջարկը գերազանցել է առաջարկը 12,5 միլիոն դոլլարով, ինչը եւ հանգեցրել է դոլլարի կուրսի աճին:

■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ
DIAGNOSTICA

Գիտեմ սեր. բժշկական կենտրոններին եւ Ձեր ասպողությունը նուազի ճնշումում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01

Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24

Գյումրի, Շչեդրինի փ. 54ա, հեռ. 3-60-72

Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

Ստեփանակերտ, Մարտի փ. 6, հեռ. 4-10-06

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային դահանջներին համադատասխանող ամենաժամանակակից սարքեր ու մասնագետներ ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերդում է հանրապետությունից դուրս կամ համադատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8:30-ից մինչեւ 19:00, շաբաթ օրը մինչեւ 15:00:

եթե դուք նույնիսկ այս դայմաններում կարողանում եք աշխատեցնել Ձեր հիմնարկը, ուրեմն Ձեզ անհրաժեշտ է անքերի հաշվադահություն:

К2-Սերվիս Դրա համար դետք է IBM հաշվիչ եւ մեր հետեւյալ ծրագրերը:

1. Հիմնական միջոցների հաշվառում, 2. Հաշիվ-Ֆակտուրա, 3. Իրացում, 4. Մատակարարում, 5. Դահեստ, 6. Դեբետ-Կրեդիտ, 7. Աշխատավարձ, 8. Բալանս, 9. Ղեկավարի աշխատատեղ

25.47.58
25.24.63

IBM

«Արամ Խաչատրյան»
Ֆիլհարմոնիկ տարի
«ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵՆՔ»
Սիմֆոնիկ երաժշտության ամառային օրեր
Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ (ՀՖՆ)
Գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Լորիս Ճգնավորյան
Երեւանի սիմֆոնիկ նվագախումբ (ԵՍՆ)
Դիրիժոր Գեւորգ Մուրադյան
Փառատոնը լուսաբանում է «ԼՈՒՍԱՓԱՐ»
Հովանավոր Անդրնավթագազին
ԳԱԶՊՐՈՄ
բաժնետիրական ընկերությունը

Հունիս 19. Ռուսաստան. ՀՖՆ
Ա. Սոֆենդիարյան «Երեւանյան Լույսեր» — Պ. Չայկովսկի Դաշնամուրի կոնցերտ թիվ 1 (Ռ. Սովսիսյան) — Ս. Ռախմանինով Սիմֆոնիկ պարեր

Համերգների սկիզբը ժամը 19.30-ին
Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» Ֆիլհարմոնիկ տարի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-ից 18-ը

Ռուսաստանի դաշտդանության նախարարությունը չմեղանում է

Ռուսաստանի դաշտդանության նախարարության մամուլի կենտրոնը հերքեց Հայաստանի լրատվության միջոցների հաղորդագրությունը, թե Գյանջայում տեղակայված Ռուսաստանի 4-րդ բանակի 23-րդ զորամիավորումը մասնակցում է Ադրբեջանի հարձակողական գործողություններին Ղարաբաղում: Հունիսի 16-ին Մոսկվայում հրադարակված հայտարարության մեջ նշվում է, որ 23-րդ զորամիավորման ռազմական տեխնիկան ադրբեջանական կողմին չի հանձնվել, ինչդես նաեւ վերջերս զենքի բռնագրավման դեպքեր չեն արձանագրվել: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ ավիազորամասերի բոլոր մարտական ինքնաթիռները հունիսի 9-10-ին դուրս են հանվել Ադրբեջանի տարածքից: Ռուսաստանի դաշտդանության նախարարությունում չեն բացառում այն հնարավորությունը, որ Ադրբեջանը մարտական գործողություններում օգտագործում է ձեռք բերած դայմանավորվածությունների համաձայն իրեն հանձնած սդառազինությունները եւ ռազմական տեխնիկան: Այնտեղ նաեւ չեն բացառում այն հնարավորությունը, որ նախկին ԽՍՀՄ-ի դինված ուժերի տդաները անցել են Ադրբեջանի կողմը եւ գլխավորում են ստորաբաժանումները եւ զորամասերը: Այնուամենայնիվ, այս ամենը առիթ չի տալիս մեղադրել Ռուսաստանի զորքերը կոնֆլիկտին մասնակցելու մեջ: *«Ռուսաստանյան Ֆեդերացիայի զորքերը դահդանում են խիստ չեզոք դիրք եւ չեն մասնակցում մարտական գործողություններին»*, նշվում է դաշտդանության նախարարության մամուլի կենտրոնի հայտարարության մեջ:

■

Ծնունդները խիստ նվազել են Ռուսաստանում

Մոսկվայի դետհամալսարանի բնակչության հետազոտման կենտրոնի տվյալների համաձայն, որ հրադարակել է «Նյուզուիք» շաբաթաթերթը, 1980-ական թթ. կեսերից սկսած հետզհետե իջել է նորածինների թիվը Ռուսաստանում: Մասնագետների կարծիքով, այդ երեւույթի դատճառը հիմնականում ազգաբնակչության տնտեսական դժվարությունն է:

Եթե Ռուսաստանում 1980 թ.-ին բնակչության աճը եղել է տարեկան 2,3 միլիոն, իսկ 1983 եւ հատկապես 1986 թթ.-ին 2,5 միլիոնի սահմանում, ապա 1987 թ.-ից սկսած այն վայրընթաց նվազել է 1991 թ.-ին հասնելով 1,7 միլիոնի, որ աճի կորագիծը հաստատ է մահացությունների գիծը, որ 1980 թ.-ից սկսած, ընդհակառակը, աճ է արձանագրում 1991 թ.-ին հասնելով 1,7 միլիոնի:

■

Ափիոնի խաշխաշը Տաշքենդի կենտրոնում

Հենց Տաշքենդի կենտրոնում իրավապահ մարմինների աշխատակիցները հայտնաբերել եւ ոչնչացրել են ափիոնի խաշխաշի տունկերը: Քրեական հետախուզության աշխատակցի խոսքերով, այդ բերքից ստացված եկամուտը կկազմեր կես միլիոն ռուբլի:

■

Շախմատի համաշխարհային օլիմպիադա

Տղամարդկանց թիմը երկրորդ տեղում է

Կանայք. Հայաստան-Թուրքիա՝ 3:0:

Մեր թղթակից Գագիկ Հովհաննիսյանը Մանիլայից հաղորդում է հատուկ «Ազգ»-ին

Ութերորդ տուրում Հայաստանի հավաքականը հանդիպեց Չեխոսլովակիայի թիմի հետ եւ հաղթանակ տարավ 3:1 հաշվով: 9-րդ տուրում մեր թիմին բաժին ընկավ Հոլանդիայի ուժեղ հավաքականը աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդ Յան Թիմանի գլխավորությամբ: Նրա հետ մրցեց Վլադիմիր Հակոբյանը եւ վստահ հաղթանակ տարավ: Ոչ ոքի խաղացին Լոմաչենկոն, Մինասյանը եւ Պետոսյանը: Այսպիսով, մեր թիմը հաղթանակ տարավ 2,5:1,5 հաշվով: Այս հաղթանակներից հետո Հայաստանի տղամարդկանց հավաքականը, 36 հնարավորից վաստակելով 23,5 միավոր, զբաղեցնում է երկրորդ տեղը: Առջեւում Ռուսաստանի թիմն է 27 միավոր եւ 1 անավարտ խաղ: Հայաստանի հավաքականին հաջորդում են Հունգարիայի, Վրաստանի, Իսլանդիայի, ԱՄՆ-ի թիմերը:

Կանանց մեր հավաքականը 3:0 հաշվով վստահ հաղթանակ տարավ Թուրքիայի հավաքականի նկատմամբ: 9-րդ տուրում մեր թիմը ոչ-ոքի խաղաց իսպանուհիների հետ

■

«Աչաջուր»

երկրաղաի ջոկատի դահանջով Երեւանում, Աբովյանում, Հրազդանում եւ Արզնիում բնակվող նախկին աչաջրեցիները հավաքվեն Երեւանում, Խաչատրյանի արձանի մոտ, շաբաթ օրը, հունիսի 20-ին, ժ. 12-ին:

«Աչաջուր»
երկրաղաի ջոկատ

Վետերանների երգչախմբային համերգը

Դատերազմի վետերանները եւ բուլղարահայ վետերանները հունիսի 27-ին, ժամը 18:00-ին երգչախմբային ընկերության տան դահլիճում (Սայաթ-Նովա 15) կազմակերդում են «Օգնություն Արցախին» բարեգործական համերգ: Համերգից ստացված ամբողջ հասույթը փոխանցվելու է Արցախ:

Համերգի ընթացքում կատարվելու են ինչդես կանխիկ, այնդես էլ փոխանցումներով հանգանակություններ:

Տոմսերը վաճառվում են երգչախմբային ընկերության տան ճեմասրահում:

Համերգի հովանավորն է ՀՌԱԿ Վ. Թորոսենց ակումբը:

Azg Bi-daily 7 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Խմբագիր՝ Ս. ՍՐԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN

Macintosh համակարգչային շարուածը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տան Երեւան, Արշակունեաց 2

Լուրերը interfax-ի, «Սնարի» եւ մեր թղթակիցների

digitised by A.R.A.R.@